№ 185 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՕԳՈՍՏՈՍԻ — 1910 — ԵՐԵՔՇԱԲԹԻ, 24 ՕԳՈՍՏՈՍԻ № 185

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
4 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Ռուսաստանից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սոֆիա Պալօվնա, Ելիզավէտա Նիկիտիչնա և Սէրգէյ Պալօվիչ ԵԴԻԳԱՐԵԱՆՆԵՐԸ յայտնում են իրանց սրտանց և խորին շնորհակալութիւնը բոլոր ազգականներին, ծանօթներին, բարեկամներին և Ղարաքիլիսայի հայ հասարակութեան՝ յանձին նրա ներկայացուցիչների, որոնք անձամբ, նամակներով և հեռագրերով պատւել են

հանգուցեալ

ՓԱՇՕ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԵԴԻԳԱՐԵԱՆՑԻ

ՅԻՇԱՏԱԿԸ 1—1

Սրանով յայտարարվում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

բարւոք է համարել խօլերայի պատճառով

Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ, որ նշանակված էր սեպտեմբերի 12-ին, ՅԵՏԱՁԳԵԼ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՎ։

Նախագահ Կոնսիստորիայի՝ Եփրեմ վարդապետ

(ա. օ.) առ. 962. 3—3

Դպրոց Կատ. Լիսիցեանի

Տեղափոխվում է նոր, աւելի ընդարձակ բնակարան՝ Սերգիեվսկայա փող. սեփ. տ. № 20, վերին յարկ։ Ընդունվում են տղաներ և աղջիկներ պատրաստականի ստորին, միջին և բարձր բաժանմունքներն և առաջին դասարանը (աղջիկները նաև 2-րդ դաս.) օգոստոսի 27-ից առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։ Ուսումը սկսվելու է սեպտ. 6-ին։

(10,17,24,27,1.) առ. 9 8. 5—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, երեքշաբթի, օգոստոսի 24-ին
տեղի կունենայ

Ընտանեկան երեկոյթ

պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի համար հայերէն կը ներկայացվի

ԴՈՆ-ԳՐԻԳՈՐԻՕ

Կոմեդիա 3 գործ., Թարգմ. Թուրեանի

Երեկոյթին կը նուագեն լարանուագների խումբը և սազանդարներ։

Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ.։

Ներկայացման տոմսակները՝ 10—30 կ. արժողութեամբ՝ ծախվում են ժողովարանի շվէյցարի մօտ։

Ներկայացումից յետոյ՝ ՊԱՐԵՐ

Ներկայացմ. սկիզբը երեկ. ժամը 9-ին։

(ա.) 980. 1—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ և ՊԱՆՍԻՕՆ

տղաների համար

Եկատերինէ Ստեփանեան **ԲՈՒՂԴԱՆԵԱՆՑԻ**

Ընդունում է երեխաներին և պատրաստում բոլոր միջնակարգ դպրոցների համար. ընդունելութիւնը օգոստ. 25-ից։ Պարապմունքները սեպտ. 1-ից։ Уголъ Ртищевской и Вознесенской, 2, д. Араратова.

(Ե.Հ.Կ.) առ. 963. 3—1

ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԴԱՍԱՐԱՆ
ԴԱՇՆԱՄՈՒՐԻ
ազատ գեղարուեստագէտ-դաշնակահար
ՅՈՎՍԷՓ ԳԷՈՐԳԵԱՆ
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
Թիֆլիս, Ելիզավետինսկայա, 40.

ԴԱՍԵՐԻ ԳՆԵՐԸ.—Իր տանը՝ ամսակ. 10 ր. (2 դաս շաբաթական) և ամսակ. 8 ր. (1 դ. շաբ.)։ Տներում՝ ամս. 25 ր. (2 դ. շաբ.) և ամս. 15 ր. (1 դ. շաբ.)։ Վճարը ամսի սկզբից։ Ընդունակութիւն ունեցող չքաւորներին սովորեցվում է ձրիաբար, և այդպիսիներն ընդունվում են կոնկուրսով։ Համաձայն եղած ազատ տեղերի, ներկայացնելով չքաւորութեան վկայական։ Ձրիների թիւը 30 է։ Առաջադէմներն անցնում են նաև երաժշտութեան թէօրիա։ Իւրաքանչիւր տարի՝ համերգներ։ Տօն օրերը դաս չէ աւանդվում (օ.ա.) առ. 985. 20—1

Գայիանեան Օրիորդաց Դպրոցում ազատ տեղեր կան բոլոր դասարաններում, բացի երրորդ պատրաստականից։ Այս տարի բացվում է հինգերորդ հիմնական դասարանը (ուսմ. VIII տարի)։

Վերաքննութիւնները տեղի կունենան օգոստոսի 25-ին և 26-ին, իսկ նոր ընդունվողների քննութիւնները՝ 27-ին, 28-ին և 30-ին (ուրբաթ, շաբաթ և երկուշաբթի)։

Հոգաբարձութիւն

(Հ.Ե.Հ.) առ. 957. 3—2

ԼՕՐ գիւղի (Զանգեզուրի գաւառ) եկ.-ծխ. դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ

Ներսիսեան դպրոցը կամ Գէորգեան ճեմ. աւարտած։ Ռոճիկ 400—450 ռուբլի, բնակարան և վառելիք։ Դիմել՝ Балаханы, промысель Арало-Каспійскаго Т-ва, Аствацатуру Іоннисянцу.

(ա. օ.) առ. 974. 4—2

ՉԷ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ

I

Ծանր են մեր տպաւորութիւնները վերջին օրերում։

Ահա մի շարք ուսուցիչներ, որոնք մնացել են առանց վարձվելու, մի շարք ուսանողներ, որոնք անկարող են իրանց ուսման գնալու՝ նիւթական պակասութեան պատճառով, մի շարք աշակերտներ, որոնք հնարաւորութիւն չունեն դպրոցներ մտնելու՝ վերջիններիս լիքը լինելու պատճառով։

Մեզ դիմում են արժանաւոր, բարեխիղճ և երկար տարիներ արդիւնաւէտ աշխատանքով յայտնի ուսուցիչներ, խնդրելով ցոյց տալ պաշտօնավարութեան համար ազատ մնացած տեղեր։ Միևնոյն ժամանակ բաւական տեղեկութիւններ կան, որ մի շարք դպրոցներ դեռ ևս չեն կազմակերպել մանկավարժական խմբեր և նոր պէտք է ձեռնարկեն այդ գործին սեպտեմբեր ամսում։

Չը նայելով այն հանգամանքին, որ մի քանի մասնաւոր փորձեր հանդէս եկան միջնորդ հանդիսանալու ազատ ուսուցիչների և դպրոցների միջև, այնուամենայնիւ ուսուցիչների վարձվելու գործը գտնվում է ամենաանմխիթարական վիճակի մէջ և պաշտօն յանկացողներն ու պաշտօնեայ որոնողները չեն կարողանում միմեանց հետ անմիջական բանակցութեան մէջ մտնել։

Ներկայ խնդրում թեմական տեսուչներն ևս կարող էին իրանց կողմից նպաստել կանոնաւոր յարաբերութիւններ ստեղծելուն երկու կողմերի համար. բայց նրանց ընտրութիւնը դեռ չէ կատարվել բոլոր թեմերում. ուստի նրանք ներկայումս անկարող եղան իրանց ազդեցութիւնը գործ դնել առաջիկայ ուսումնական տարվայ համար։

Եւ ահա երբ հետևանք այդ անմխիթարական պայմանների մենք տեսնում ենք մեր ուսուցչական տարրը մատնված անգործութեան և չափազանց անհանգիստ վիճակի։ Ուսուցիչը և դպրոցը չեն կարողանում միմեանց գտնել, միմեանց մօտենալ, միմեանց հասկանալ։

Մենք ցաւում ենք, որ իրանք ուսուցիչները մինչև այժմ անկարող հանդիսացան հիմնել մի այնպիսի կարգ, որը մի տեղ կենտրոնացնէր ուսուցչական և դպրոցական դիմումները և դիւրութիւններ ընծայէր կողմերին աջողութեամբ գլուխ բերելու մանկավարժական խմբեր կազմելը դպրոցներում։

Իսկ դա աւելի քան ժամանակի և գործի պահանջ է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 21 օգոստոսի

Մոսկվայից եկաւ հելլէնների թագուհին և կայարանից գնաց Մարմարեայ պալատը։ (Հ. Գ.)

Բեռլին, 22 օգոստոսի

Երեկոյեան նոյին մեծութիւնների մօտ կայացաւ ճաշ ի պատիւ Ռօբէրտսի։ Ներկայ էին կանցլէրը և արտաքին գործերի մինիստրը։

Ռօբէրտսը կէսօրին ընդունվեց կայսրից։ Ունկնդրութեանը ներկայ էր արտաքին գործերի մինիստրը (Հ. Գ.)

Ցետինիէ, 22 օգոստոսի

Գայիսօնի յանձնման արարողութիւնից յետոյ թագաւորի, Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի և մնացեալ օգոստափառ անձերի ներկայութեամբ տեղի ունեցաւ տաճարի հիմնադրութիւնը կառավարական տան առաջ։ Թագաւորը և Մեծ Իշխանը դրին առաջին քարը։ Տաճարը կառուցանվում է Թագաւոր Կայսրի նուիրած գումարով։ (Հ. Գ.)

Ցետինիէ, 21 օգոստոսի

Սերբիական գահաժառանգը երէկ մեկնեց Բելգրադ։

Երէկվայ ճաշին պալատում յունական գահաժառանգը բաժակաճառին ասաց. «Ամեն մի հելլէն պէտք է խորին յարգանք և համակրանք զգայ դէպի ձեզ և ձեր ժողովուրդը, որ ոգևորված է մեզ հետ միատեսակ զգացմունքներով և միատեսակ հայրենասիրական ձգտումներով։ Յոյն ժողովուրդը, որ ներկայանում է յանձին իմ, միշտ մեծ հետաքրքրութեամբ է հետևել հաւատակից չեռնոգորիական ժողովրդի բաղդին։ Նրա ջանքերը պսակվեցին աջողութեամբ»։

Մեծ Իշխանի գալուստը ողջունվում է մեծ ցնծութեամբ։ (Հ. Գ.)

Սոֆիա, 21 օգոստոսի

Ֆերդինանդ թագաւորը եկաւ Սոֆիա, երեկոյեան մեկնելու է Էվկսինոգրադ։ (Հ. Գ.)

Ռամբուլիէ, 21 օգոստոսի

Ֆալիէրը զինուորական և լուսաւորութեան մինիստրների ուղեկցութեամբ մեկնեց Սավօյի՝ ներկայ լինելու Սավօյի միացման յոբելեանական հանդէսներին։ (Հ. Գ.)

Շամբէրի, 22 օգոստոսի

Եկաւ և ցնծութեամբ ընդունվեց նախագահ Ֆալիէրը։

Ֆալիէրը ներկայ եղաւ զօրաբանակի վարժութիւններին, այցելեց հիւանդանոցը, նախագահեց Ժան-Ժակ Ռուսսօյի արձանի բացման հանդիսին։ (Հ. Գ.)

Մադրիդ, 21 օգոստոսի

Լիսսաբօնից ստացված տեղեկութիւնների համաձայն, կառավարական մեծամասնութիւնը կունենայ մօտաւորապէս 30 ձայնի գերակշռութիւն։ (Հ. Գ.)

Սարագօսսա, 21 օգոստոսի

Տեղում տիրում է լիակատար հանգստութիւն։ Խանութները բաց են, աշխատանքները վերսկսվում են։ (Հ. Գ.)

Աթէնք, 21 օգոստոսի

Եկաւ Վէնիզէլօսը։ (Հ.Գ.)

Հռօմ, 22 օգոստոսի

Սոմալիի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն Ադդիս-Աբեբից, Նեգուս Մենելիքը գտնվում է վտանգաւոր վիճակի մէջ։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 22 օգոստոսի

Թալէաթ-բէյը յայտնեց «Թանինի» խմբագրին, որ մակեդոնական բուլղարները, համոզվելով թէ Թիւրքաց սահմանադիր կառավարութիւնը բարեացակամ է տրամադրված, վճռել են այլ ևս չենթարկվել բուլղարական կոմիտէների ագիտացիային։ Շտիպում օգ. 1-ին բողոք է յայտնված բուլղարական հրոսակախմբերի գործողութիւնների դէմ. վճռված է կառավարութեան ձեռքը յանձնել ագիտատորներին և զէնքերը։ Ուրիշ տեղերում նոյնպէս բողոքներ են յայտնում բուլղար հրոսակախմբերի դէմ։ (Հ. Գ.)

Պօլիս, 22 օգոստոսի

Երկարատև բարեկամական խօսակցութեան մէջ Հակկը փաշայի և Բրիանի ու Պիշօնի միջև պարզվեց, որ ֆրանսիական և օսմ. կառավարութիւնները փոխադարձաբար համակված են բարի յարաբերութիւններ պահպանելու ցանկութեամբ։

Տեսակցութիւնից յետոյ Հակկը փաշան վերադարձաւ Պարիզ։ (Հ. Գ.)

Պօլիս, 21 օգոստոսի

Մեծ վէզիր Հակկը փաշան եկաւ Վէրզան-Մօնտան և այցելեց Բրիանին և Պիշօնին։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 21 օգոստոսի

Շահի ծննդեան օրը գեներալ-նահանգապետի մօտ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն։

Շրջակայքում հանգիստ է։ Ջուլֆա-Թաւրիզի ճանապարհին մեծ երթևեկութիւն է. ապրանքատար աւտօմօբիլները շարունակ գործում են։ (Հ. Գ.)

Ուրմիա, 21 օգոստոսի

Սօուջ-Բուլաղից հաղորդում են, որ Թիւրքերից գրաւած գիւղերից մի քանիսի կալուածատէրերը փորձեցին յետ խլել իրանց այն կալուածքները, որոնց տիրապետել է կամայականօրէն Թիւրքերի գործակից մանդուր ցեղի Համզաբէկը։ Տեղի ունեցաւ ընդհարում։ Սպանված են 30-ից աւելի մարդ։

Պաշտօնանկ արված Մօհթէշամ-ուս-Սալթանէի փոխարէն Ուրմիայի, Սալմաստի և Խօյի նահանգապետ նշանակվեց Ջալիլ-Միւլքը, որ այսօր սպասվում է Սալմաստում 300 ձիաւորների ուղեկցութեամբ (Հ. Գ.)

Աստարա.—Լուրերին նայած՝ Ատրպատականում կազմակերպվում են «դրուժինաներ», որոնք մտադիր են արշաւել Թէհրանի վրա Սաթթար-խանից վրէժ լուծելու նպատակով։

Քէրիմ-խանը գրգռում է Ռաշտի բնակիչներին, յորդորելով նրանց յարձակվել Թէհրանի թիւրքական միսսիայի վրա և ազատել իր եղբօրը։

Աստարայից 40 վերստ հեռաւորութեան վրա ընդհարում եղաւ կառավարական զօրքերի և Թալիշ ցեղի միջև, որ ապստամբվել է կառավարութեան դէմ Սաթթար-խանի արիւնը թափելու պատճառով։

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻՑ

I

Բրիւսել, 15/28 օգոստոսի

Բեռլինից ես եկայ Բրիւսէլ այցելելու աշխարհահանդէսը և մասնակցելու երեք միջազգային կոնգրէսների, որոնք, իմ տեսակէտով, մեզ հայերիս համար կարևոր նշանակութիւն են ներկայացնում։ Այդ կոնգրէսներն են. 1) ընտանեկան և դպրոցական կրթութեան միջազգային կոնգրէսը, 2) մատենագիտութեան (բիբլիօգրաֆիայի) միջազգային կոնգրէսը և 3) ժողովրդական կրթութեան միջազգային կոնգրէսը։

Եւ ես չը փոշմանեցի, այցելելով թէ ցուցահանդէսը և թէ մասնակցելով վերոյիշեալ կոնգրէսներին։

Թէև ցուցահանդէսի մի մասը հրդեհի ճարակ եղաւ և այդ հանգամանքը, ի հարկէ, ազդեց այցելուների թւի վրա այն մտքով, որ հեռաւոր երկիրներից, օրինակ Ամերիկայից, պակասեց այցելուների քանակութիւնը, բայց, այնուամենայնիւ, ցուցահանդէսը պահպանել է իր կարևորութիւնը և ահագին հետաքրքրութիւն է ներկայացնում, այնպէս որ այցելուների թիւը նորից սկսել է բազմանալ և, սեպտեմբերին հաւանօրէն, կը հասնի իր գագաթնակէտին, այսինքն օրական այցելուների թիւը կը հասնի 100—150,000-ի, ինչպէս եղել է հրդեհից առաջ (եղել են և օրեր, երբ այցելուների թիւը հասել է 250—300,000-ի)։ Եթէ ի նկատի ունենանք, որ բացի օրական այցելուներից կան և բաժանորդներ (abonnés) մօտ 50,000, և ամեն մի անգամ մուտքի վճարը՝ մի ֆրանկ է, հասկանալի կը լինի, թէ որքան կորցնում է ցուցահանդէսի կազմակերպող ընկերութիւնն այժմ, հրդեհից յետոյ, երբ օրական այցելուների թիւը հասնում է 25—30,000-ի։ Առաջ, օրական հասոյթ ընկերութիւնը ստանում էր 100 կամ 150,000 ֆրանկ, այժմ միայն 25—30,000 ֆրանկ։ Բայց, կրկնում եմ, որովհետև այրված մասերը վերաշինելու աշխատութիւնները մեծ արագութեամբ առաջ են ընթանում, և 10 օրից յետոյ բոլոր վերաշինութիւնը կատարված կը լինի, ուստի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին դարձեալ այցելուների մեծ բազմութիւն է սպասվում։

Սկզբում, հրդեհի անմիջական տպաւորութեան ներքոյ, թէ ընկերութիւնը և թէ բելգիական կառավարութիւնը մտադրվում էին փակել ցուցահանդէսը։ Բայց այդ լքումը և վհատութիւնը տևում է միայն մի երկու օր, և նրան յաջորդում է մի նոր, զարմանալի եռանդ՝ վերաշինել այրված մասերը և վերակազմել նախկին դրութիւնը։ Այդ եռանդը կրկնապատկվում է, երբ անգլիական և ֆրանսիական կառավարութիւնները (այրվել են գլխաւորապէս Բելգիայի, Անգլիայի և Ֆրանսիայի մասերը) յայտնում են իրանց որոշումը՝ վերաշինել իրանց մասերը։

Եւ այսօր, երբ միայն 15 օր է անցել հրդեհից, արդէն գրեթէ ամեն ինչ վերաշինված է և այս օրերս մեծ հանդէսով պէտք է տեղի ունենայ վերաշինված մասերի բացումը։

Հրդեհից առաջացած կորուստը ահագին է. բաւական է ասել, որ միայն անգլիական ապահովագրական ընկերութիւնները պէտք է վճարեն ապահովագրութեան գումար 75,000,000 ֆրանկ։ Մի կորուստ, որ անգնահատելի է, այդ՝ արուեստի և ձեռագիրների մի քանի հազուագիւտ և եզակի օրինակների կորուստն է, և այդ կորուստն առաջ բերեց գիտնական ընկերութիւնների և կոնգրէսների պահանջը՝ այլ ևս այդպիսի հազուագիւտ և եզակի օրինակները ոչ մի կերպով դուրս չը տալ։

Այժմ անցնենք ցուցահանդէսի ընդհանուր նկարագրութեան, որովհետև անհնարին է տալ նրա մանրամասն նկարագրութիւնը։

Հ. Առաքելեան

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 12 օգոստոս

Հակկը փաշան, իր եւրոպական ուղևորութեանը մէջ, դափնիներ կը քաղէ օսմ. կառավարութեան համար։ Իր ուշադրութիւնը, ինչպէս կ'երևի, աւելի սևռած է դէպի աւստրիական արտաքին քաղաքականութիւնը՝ զինքը շրջապատող բալկանեան իշխանութեանց մասին։ Յաջողութեանց լուրեր կու գան։ «Թանին», խրախուսուած հաւաստիքներէ, իր փաղաքշական ոճը փոխեց Բուլղարիոյ մասին և անիրաւ կը գտնէ այսօր այն բողոքի ձայները, որոնք բարձրացան շարունակ Սօֆիայի մէջ մակեդոնական զինաթափութեան առթիւ կըսէ. «Մենք շատ բնական կը գտնենք այդ դժգոհութիւնները, որովհետև մեր ձեռքը գտնուած յեղափոխական փաստերէն յայտնի կ'ըլլայ, թէ բուլղարական ծրագիրներէն մին այս է, որ երբ Թիւրքերու հետ պատերազմ ծագի, պիտի ըմբոստացնեն մեր ներքին գաւառները, պիտի յարձակին տան երկաթուղիներու, խճուղիներու, պաշենաբարձ խումբերու վրայ, և այսպէս երկու կրակի մէջ պիտի բռնեն մեզ»։ Իրաւցի կը գտնէ, որ բուլղար գիւղացիները առաջուընէ զինաթափ ըլլալ ու այդպէս՝ ոչնչութեան դատապարտուի բուլղարական ծրագրին կարևոր մէկ մասը։ Մակեդոնացիներու գաղթականներն ալ դրդումներու հետևանք կը կարծէ հերքելով բուլղար թեր-

թերու գանգատները, թէ քրիստոնեաները կը խոշտանգուին՝ զէնքերնին գլուելու պատրուակի ներքև:

Փախստականներու հարցի մասին համաձայնութիւն եղած է երկու դրացի կառավարութեանց մէջ. և, այդ առթիւ, բուլղար թերթ մը, «Պրոպորէց», կը գրէ. «Շնորհաւորելու է ամեն անոնք, որ օժանդակեցին խաղաղութեան յաղթանակին: Սակայն, որպէսզի անոր արդիւնքը երաշխաւորուի, պէտք կայ անընդհատ աշխատութեանց: Երրորդ կամ չորրորդ փորձն է, որ կընէ Թիւրքիա վերանորոգման համար: Եթէ այնքան նպաստաւոր հանգամանքներու մէջ տեղի ունեցող այս վերանորոգումը ձախողի, տխուր պիտի ըլլայ պատասխանատւութիւնը ձախողուածը առաջ բերող Թիւրքերուն: Դժբաղդաբար կան այնպիսի մարդիկ, որոնց յատկանիշն է ծայրայեղ ազգայնամոլութիւն, որով կուզեն հակառակ երթալ դարաւոր աւանդութեանց և զանազան ազգութիւններէ բաղկացած կայսրութիւն մը դարձնել միութիւն մը՝ ի նպաստ փոքրամասնութեան մը»:

Հակկը փաշայի դիւանագիտական յաջողութիւններ կրնան, օրէ օր, փոխել երկու դրացի մամուլներու ոճը:

Աթէնքի դեսպանը, տեսակցելով մեր արտաքին գործերու մինիստրի հետ, 20 միլիոն ֆրանկի տուգանք մը առաջարկած է այն վնասներու պատճառաւ, որ ունեցած է հելլէն վաճառականութիւնը պայքարի պատճառաւ:

Այդպիսի առաջարկութիւն մը, մանաւանդ Աթէնքի դեսպանի կողմէ, և մանաւանդ արդի հանգամանքներու մէջ, եթէ ոչ յանդգնութիւն, անկէ ալ պակաս ենթադրելու չէ: Մեր մինիստրը, քմծիծաղով, չլսելու եկած է, իբրև թէ դեսպանը այդպիսի խօսք մը բերնէն հանած չըլլար:

Միւս կողմէ՝ Աթէնքէ եկած լուրերը շատ խաղաղասիրական չեն. պատրաստութիւններ կը տեսնուին, կըսուի: Սահմանագլուխին վրայ ալ շարժումներ կան: Դեսպանը, կերևի, ուզելով օգուտ քաղել այդ խլրտումներէն, վարպետօրէն ներկայացուցած է այդ տուգանքի առաջարկութիւնը, պատին զարնուած ծեփ մը, եթէ բռնեց՝ լաւ, իսկ եթէ չբռնեց, կորուստ մը չկայ արդէն:

Արդարադատութեան գործերու մինիստրը Ֆէնէրի պատրիարքին ծանուց բացէ ի բաց, որ կառավարութիւնը թոյլ չի տար ազգ. ժողով գումարելու: Պիտի սպասենք տեսնել, թէ ինչ պիտի ընէ «տիեզերական» պատրիարքը:

Մեր պատրիարքը, ուսւ-փուս, իր դիմումները կը շարունակէ: Ան ըմբռնած է հաստատօրէն, որ այդ ճամբով միայն կարելի է գործ տեսնել: Ու բնաւ կեցած չէ. կամ կառքին մէջ է դէպի Բ. Դուռ և կամ ժողովի մը գլուխն է, մանաւանդ այս օրերս, ուր ժողովներ, այլ և այլ անուններով, տունկերու պէս մէջտեղ ելան. չորեքշաբթի և ուրբաթ կը նախագահէ վարչութեան քաղ. և խառն ժողովներու. երկուշաբթի՝ կրօնական ժողովի: Դարձեալ, զանազան օր և զանազան ժամերու մէջ, պիտի նախագահէ Որբախնամի նիստերուն, «Հայոց Հրատարակչականի» խմբագրական մարմնին, որու անդամ ընտրուած է, «Եգիպտական Հրատարակչականին»: Այս բոլոր զբաղմունքներու հետ, ստիպուած է կարդալ գաւառական թղթակցութիւններ, մակագրել իւրաքանչիւրը, լսել բերանացի դիմումները, ատեն ատեն՝ պաշտօնական ընդունելութիւններ ընել: Նաև ուրիշ բաներ: Իսկապէս անտանելի բան, և որ սակայն անտրտունջ կը կատարէ Դուրեան պատրիարք:

Շահէն

ՆԵՐՔԻՆ. ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ Ն. ՄԱՐՐԻ ՀԵՏ

Կիրակի օր, օգոստոսի 22-ին, պրօֆեսսոր Մարրը անցաւ Թիֆլիսով:

Մենք առիթ ունեցանք տեսնվելու Նրա հետ, խօսակցելու Նրա՝ Անիում և Գառնիում այս տարի կատարած ուսումնասիրութիւնների մասին:

Մարրը բաւական է ստացած արդիւնքներից:

Եթէ Նրա տրամադրութեան տակ եղած լինէին աւելի մեծ նիւթական միջոցներ, Նա աւելի ընդարձակ ծաւալով կատարած կը լինէր պեղումները, մանաւանդ Անիում:

Բայց պէտք է այն էլ նկատել, որ պեղումների ժամանակ դուրս հանված առարկաների համար տեղ չը կայ ներկայումս: Անիի թանգարանը արդէն լցվել է, իսկ Գառնիում ոչ մի պատսպարան չը կայ հնութիւնների համար:

— Թանգարանների և առհասարակ պատսպարանների պահանջը շատ մեծ է պեղումների կանոնաւոր և անընդհատ ընթացքի համար,— ասաց Մարրը:— Վերջին օրերում, երբ գտնվեցին նոր գնահատելի արձանագրութիւններ վրաց և հայկական գրութիւններով, ես մանաւանդ հետամուտ էի յարմար տեղ գտնելու նրանց համար և դժուարութեան մէջ էի ազատ սենեակ չունենալու պատճառով: Ես գտայ տեղ նրանց համար, բայց ինչ պէտք է անել յետագայ հնագիտական գանձերի համար. նոյնպէս պատսպարան է հարկաւոր Գառնիի շրջանում գտնված իրերի համար:

Մարրը պատմեց Անիի հին փողոցներից մէկի բացման և նրա երկու կողքին զետեղված տների մասին: Ուշադրութեան արժանի են առանձնապէս քարվանսարայի կամ պանդոկի շինութիւնը և ջրանցքը:

Այս տարի Անիում եղել են մեծ թւով այցելուներ, որոնց մէջ յատուկ տեղ են գրաւել գիտնական զբօսանքների մասնակցող անձեր՝ ուսանողներ, ուսանողուհիներ, ուսուցիչներ և ուրիշ անձեր:

— Այցելուների մեծագոյն մասը, մի տեսակ ուխտագնացութեան է գալիս Անի և ոչ փոքր ի շատէ լուրջ գիտնական հետաքրքրութեան համար: Այնուամենայնիւ ցանկացողների համար մենք պատրաստ էինք օրվայ մէջ երկու անգամ բացատրութիւններ տալ թանգարանում հաւաքված իրերի մասին և տալիս էինք:

Մարրը պատմեց այցելուների մի քանի խմբերի, ինչպէս և նրանց ցոյց տուած հետաքրքրութեան առանձնայատկութիւնների մասին: Անիի աւերակները այցելել է այս ամառ նաև մի անգլուհի ճանապարհորդ, որ եղել է Մերձաւոր Արևելքի զանազան կողմերում: Թէ այդ անգլուհին և թէ միւս օտար ճանապարհորդները աշխատում են ձեռք բերել լուսանկարներ, գրքոյկներ, պօստ-կարտեր, քարտէզներ և անում են մանրամասն հարցուփորձեր: Կովկասեցիները բաւականանում են թռուցիկ շրջագայութեամբ: Աւելի քան հազար այցելուները հազիւ 20 օրինակ ուղեցոյց գրքի պահանջ են զգացել ամառվայ ընթացքում:

Շուտով պատրաստ կը լինի Անիի մեծ քարտէզը, որը լոյս կը տեսնի ձմեռվայ ընթացքում մի քանի յօդուածների հետ միասին:

Այս տարի բազմաթիւ իրեր լուսանկարվել են Անիում Տիխոնովի և մասամբ Մարրի անդրանիկ որդու ձեռքով:

Անիի ուսումնասիրութիւնները, որքան էլ դժուարութիւններ ունենան, տանելի են շնորհիւ այն հանգամանքի, որ կան բնակութեան տեղ, պատսպարվելու մի որոշ աստիճան յարմարութիւններ, բայց Գառնիում կատարելապէս բացակայում են ապրուստի ամենահամեստ պայմաններ: Չը կայ պատսպարան, մեծ դժուարութեամբ են ճարվում ուտելու մթերքներ թէ ուսումնասիրողների և թէ բանւորների համար և այն էլ գնահատվում են աւելի թանգ, քան քաղաքում:

Մենք խօսեցինք այնուհետև հայ-վրացական բանասիրութեան գործողների համագումարի, Լազիստանում կատարած ճանապարհորդութեան, հնագիտական ինստիտուտի հաստատութեան և մի քանի հրատարակութիւնների մասին:

Հայ-վրացական բանասէրների համագումարը, որ պէտք է կայանար ներկայ տարվայ յունիսի առաջին կէսում, չիրագործվեց, որովհետև թոյլտուութիւնը ստացվել էր միայն յուլիս ամսին: Եւ ուրեմն համագումարի մասին եթէ կարող է խօսք լինել, նա կարող է կայանալ հետևեալ տարի մօտաւորապէս ամառվայ սկզբին:

Այդ համագումարը կազմակերպելու համար կը սկսվեն խորհրդակցութիւններ առաջիկայ աշնանից:

Լազիստանի ճանապարհորդութեան իբրև գիտնական արդիւնք պէտք է լինի լազերի լեզուի քերականութիւնը, որ արդէն յանձնված է տպագրութեան և լոյս կը տեսնի այս օրերը:

Հնագիտական ինստիտուտի հաստատութեան խնդիրը առաջ է գնում իր ընթացքով: Նա կարող է աւելի շուտ և աւելի բեղմնաւոր արդիւնքներ տալ, եթէ կը գտնէ անմիջական աջակցութիւն հասարակութեան կողմից:

Անիի ուսումնասիրութիւնը տենչերի շրջանից անցել է գործի, շարժել է մեծ հետաքրքրութիւն և դարձել է մի պարտաւորութիւն գիտական հաստատութիւնների և հասարակութեան համար:

Ա. Քալանթար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, 20 օգոստոսի

Գանձակի գաւառի երրորդ մասը (Վերին-Շէն, Ներքին-Շէն, Էրքէջ, Գիւլլուստան իրանց հարևան գիւղերով և ամբողջ դաշտերով) բռնել է դաշտային անթիւ մկներով, որոնք գիւղացոց յուսահատ դրութեան մէջ են դրել: Չը նայած որ արտերը հնձվել են, բայց հանդից տուն փոխադրելու դեռ իրաւունք չէ ստացվել, որովհետև յիշեալ գիւղօրայքը պատկանում են բէկերի, որոնք ստանում են ստացված բերքից տասանորդ. այդպիսով հնձված խուրձերը պէտք է մնան դաշտում, մինչև որ բէկերի կողմից ընտրված մարդիկ գնան ցուցակագրեն ու այնուհետև իրաւունք տան հանդից տուն բերելու: Այդ պատճառով էլ՝ այդ գիւղացիք աւելի են տուժում դաշտային մկներից: Դաշտային մկների դէմ կռւելու միջոցները կարևոր էին այստեղ ևս գործադրել:

Այստեղ եղանակը բաւականին հովացել է. Թարաքամա ցեղը (кочевники) սկսել է սարերից իջնել: Այս տարի անասունների մէջ հիւանդութիւն չէ եղել: Նրանք գոհ սրտով հեռանում են սարերից:

Սիւնեցի

—

Նոր-Բայազէտ, 18 օգոստոսի

Յուլիսի 19 ի անձրևից յետոյ, ահա մի ամբողջ ամիս է, ոչ մի կաթիլ անձրևի երես չենք տեսել: Գիշերներն էլ կարգին եղեամ չէ իջնում: Դրանից բացի դեռ ամբողջ օգոստոս ամիսը անցաւ տաք քամիների տակ, որոնք եկան էլ աւելի փչացնելու կանաչ արտերը, որոնց հասկերը դեռ չը հասունացած, չը «պնդած» հացատիկներով մի փոքր յոյս էին ներշնչում հողագործ դասին: Սակայն դրանք էլ տաք քամիների ազդեցութեան ենթարկվելով՝ բոլորովին փչացան-նիհարացան, ինչպէս փչացան նաև դաշտամկների աւերումներից: Այդպիսով կանաչ և չը հասունացած արտերը մի շաբաթում չորացան-հասունացան, այնպէս որ ամբողջ հողաբաժիններում հունձը միաժամանակ տեղի ունեցաւ տափարակ դաշտերում:

Քամիների ազդեցութեամբ, երաշտութեան և մկների վնասումներից շատ արտեր «Դուրան» կոչված հողամասում միացին անքաղ. այդպիսի հնձանները ոչ գերանդիով և ոչ էլ ձեռքով անհնար եղան քաղելու, այլ շատերը միացին անասունների արօտների համար: Մինչդեռ նրանց տէրերը յոյս ունէին դրանցով իրանց ընտանիքի ուտեստի պաշարը պատրաստել…

Երկարատև երաշտից չորացան նաև արօտները. անասունները, առաւելապէս կթի կովերն ու հորթերը, գրեթէ սոված են վերադառնում տուն: Նոյնիսկ ջրերը, լճակները, որոնցից օգտվում էին նախիրները հանդերում, իսպառ ցամաքել են՝ անձրևների բացակայութիւնից: Տաւարը դժուարութեամբ է կարողանում արածել՝ չոր ու ցամաք արօտներում, այնպէս որ նրա բերանը կարող է ցաւել և հիւանդանալ, եթէ երաշտը էլի մի ժամանակ շարունակվի: Երկիւղ կայ ժողովրդի մէջ այդ վերաբերութեամբ:

Թողն ու փոշին մարդու խեղդում են թէ քաղաքում և թէ դաշտերում՝ սայլերի ճանապարհների վրա: «Մի կաթիլ անձրև»— այդպէս է խօսում ամեն բերան, «մի քիչ անձրև», որ կը վերացնէր փոշին, կը մաքրէր տաղտկալի օդը, կը կակղեցնէր արօտները՝ կենդանութիւն ներշնչելով ամենքին. բայց երկինքը «պապզում է», չը կան ու չը կան անձրևներ… Ոչ մի ուրախաւիթ երևոյթ ժողովրդի համար…

Միակ մխիթարականը, որ նշմարվում է տեղական հողագործութեան մէջ, կայանում է խոտի գերազանց արդիւնաբերութեան մէջ, որի կրելը վերջանալու է շուտով: Օրական 1500 սայլ է բռնում քաղաքում խոտ կրելու համար: Դէզերի տեսքից և շատութիւնից քաղաքի շինութիւնները չեն երևում. ամբողջ քաղաքը թաղված է խոտի դէզերի և բարդոցների մէջ, այնպէս որ ամեն մի նորեկի վրա մի տարօրինակ տպաւորութիւն է թողնելու մեր քաղաքը: Եթէ լաւ գին ունենայ խոտը, իբր ժամանակին ծախվի տեղական անասնավաճառների վրա նախկին տարիների նման, մի կլորիկ գումար կը հայթայթվի տեղական ազգաբնակութեան համար, քանի որ տուն չը կայ, որ միջին թւով 10 սայլ խոտ չունենայ ծախելու համար: Բայց տեսնենք մեր չըդարները — խոշոր անասնավաճառներ — իրանց անասունները կը պահեն պատրաստի խոտով կերակրելու թէ՞ շուտով կը քշեն մեծ քաղաքների վաճառանոցները՝ ծախելու համար: Դա է գլխաւոր հարցը, քանի որ տաւարի գինը գնալով կարող է ընկնել մեր գաւառում՝ ձիերի պակասութեան պատճառով, իսկ ընդհակառակն դարբը, մանաւանդ դարմանը կրկնակի գին կարող է գտնել, մի բան՝ որ հաճելի չէ ոչ ոքի և ոչ ձեռնտու՝ թէ ծախողին և թէ առնողին: Յամենայն դէպս ժողովրդի դրութիւնը ընդհանրապէս կրիտիկական է լինելու այս տարի:

Որսորդ

—

Թաղավարդ գիւղ (Շուշու գ.), 18 օգ.

Ով շատ թէ քիչ ծանօթ է գիւղին, ով որոշ ժամանակ ապրել է գիւղացու մօտ, նա անշուշտ գիտէ թէ՝ մի որևիցէ համաճարակի ժամանակ ինչպիսի առատ զոհեր է տալիս գիւղը, և թէ ընդհանրապէս ամեն մի հիւանդութեան դէպքում ինչպէս է վարվում գիւղացին իր հիւանդի հետ և ովքեր են նրան բժշկողները:

Գրացներն ու զանազան սրբերն են եղել հիւանդի յոյսն ու ապաւէնը: Շատ քչերն են հնարաւորութիւն ունեցել բժշկի օգնութեան դիմելու. սակայն այդպիսիններին էլ հեռաւորութիւնն է արգելք եղել, և քիչ չեն այն դէպքերը, երբ հիւանդը դեռ քաղաք չը հասած ճանապարհին վախճանվել է և դիակն են յետ բերել:

Ահա այսպիսի պայմաններում է բացվում Թաղավարդ գիւղի զեմստվային հիւանդանոցը:

Յուլիսի 27-ին օրհնութեան ծիսակատարութիւնից յետոյ, գաւառական բժիշկ Քալանթարեան հիւանդանոցը բաց յայտարարեց:

Հիւանդանոցը պէտք է ունենայ եօթ մահճակալ գիշերօթիկ հիւանդների համար:

Թաղավարդ գիւղը իր շրջակայ գիւղերով պէտք է օգտվեն այդ հիւանդանոցից: Թէ բժշկական օգնութեան, թէ դեղերի համար, ինչպէս և հիւանդանոցում պառկող հիւանդների համար, կրկին չեն վճարելու:

Առայժմ հիւանդանոցի համար հրաւիրված են մի մանկաբարձուհի և մէկ ֆելդշէր. շուտով կը հրաւիրվի և մշտական բժիշկ:

Հիւանդանոցը ժամանակաւորապէս տեղաւորված է երկու շինութիւններում մինչև սեփական շինութիւն կառուցելը: Շինութեան համար ամսիս 8-ին գիւղական ընդհանուր ժողովը ընտրեց 10 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որը պէտք է շուտով ձեռնամուխ լինի շինութեան գործին: Շինութիւնը շուտով կը սկսվի և մօտ մի տարի յետոյ աւարտված կը լինի: Շինութեան համար Թաղավարդ գիւղը պէտք է ստանայ վարձ տարեկան 400 ր.: Ցանկալի կը լինէր, որ գիւղացիք այդ փողը յատկացնէին գիւղի ուսումնարանին որպէս մշտական եկամուտի աղբիւր. դրանով կիսով չափ ապահոված կը լինէին իրանց գիւղի աղքատ ուսումնարանը:

Թաղավարդ գիւղից մօտ 10 վերստ հեռաւորութեան վրա կուսական մի անտառում երևացել է հանքային սառը երկաթաջուր: Բժ. Քալանթարեանի ասելով, դա հիւանդանոցի համար մի մեծ օժանդակութիւն կարող է լինել: Բժիշկը մտադիր է անձամբ գնալ տեսնել և քննել ջուրը:

Գ. Յովսէփեան

ԽՈԼԵՐԱ ԵՒ ԺԱՆՏԱԽՏ

◆ Բիւլլետէն.— Օգոստ. 21-ի առ. ժ. 9-ից մինչև օգոստ. 22-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խոլերայով ոչ ոք չը հիւանդացաւ: Հիւանդանոցում կային 18 հոգի, առողջացել և դուրս են եկել 2, մեռել է 1 հոգի, ներկայումս կան 15 հոգի: Օգ. 22-ի առ. ժամը 9-ից մինչև 23-ի առ. ժամը 9-ը հիւանդացաւ 1, իսկ խոլերամահ հիւանդութեամբ 2: Կային 15, աւելացան 2, առողջացան 3, կան 14:

◆ Օգոստոսի 22-ին հիւանդացան խոլերայով և ուղարկվեցին բարաքները. 1) Նովօ-Պրօզէկտիրօֆսի փող. սեփ. տանը Սէմէբեան Ջավախաձէ, 24 տար. (բանւոր): 2) Վորոնցովսկայա փող. № 33 տանը պարսկահպատակ մաշադի Մամէդ-Հուսէյն Մաշադի-Հասան-օղլի, 35 տար., (բանւոր) և օգոստ. 21-ին մեռաւ Զէյնաբ Մամէդ-Ալի-ղըզի:

21 օգոստոսի

Պետերբուրգ.— Քաղաքային սանիտարական մասնաժողովը որոշեց հսկողութիւն նշանակել նաւահանգիստ մտնող բոլոր նաւերի վրա, նաև Նէվա իջնող նաւերի վրա:

Պրօֆ. Րէյնի հեռագրական տեղեկութեան համաձայն Եկատէրինօսլավից, Իւզովկայում խոլերային շրջանում հաստատված է ժամանակաւոր էժանագին ճաշարան, կառուցվում են նոր կացարաններ ընտանիքաւոր բանւորների համար 300,000 ռուբլու արժողութեամբ: Հեռացած բանւորների փոխարէն հարաւային նահանգներից բերել են 600 թուրքերի: Խոլերան ամբողջ շրջանում զգալի չափով թուլանում է:

Երկու շաբաթվայ ընթացքում Տամբօվի նահանգում հիւանդացել են 1337, մեռել են 707. մի շաբաթվայ մէջ Կիէվի նահանգում հիւ. 877, մեռ. 349. Կօստրօմայի նահանգում հիւ. 240, մեռ. 209. Կուրսկի նահանգում հիւ. 270, մեռ. 134. Նիժնի-Նովգօրօդի նահանգում հիւ. 270, մեռ. 70. Սամարայի նահանգում հիւ. 1197, մեռ. 548. Սիմբիրսկի նահ. հիւ. 230, մեռ. 135. Տաւրիկեան նահ. հիւ. 200, մեռ. 129. Խարկօ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՐՐԿԱՀԱՒԸ

(Մ. Գորկիից)

Ծովի սպիտակ հարթութեան վրա քամին ամպեր է կուտակում: Ամպերի ու ծովի մէջ մրրկահաւն է ճախրում հպարտ, սև կայծակի նմանութեամբ:

Մէկ թևերը շփելով ալիքներին, մէկ յարձակվելով դէպի ամպերը, նա ձայնում է, և ամպերը թռչնի ձայնի մէջ ուրախութիւնն են լսում:

Այդ ձայնի մէջ փոթորկի ծարաւն է հնչվում:

Բարկութեան թափը, տենչի հուրը և յաղթանակի աներկբայութիւնն են լսում ամպերն այդ ձայնի մէջ:

Ուրուրները հառաչում են փոթորկից, հառաչում, նետվում են ծովի վրա և պատրաստ են փոթորկի այդ սարսափը թաղել նրա յատակում:

Հիւսիսային թանձրահաւերն էլ հառաչում են. նրանց անմատչելի է կռւի բաւականութիւնը. հարուածների որոտը նրանց վախեցնում է:

Յիմար պինգվինը երկչոտութեամբ ժայռերումն է թագնվում…

Միայն հպարտ մրրկահաւն է ճախրում ազատ ու համարձակ, փրփուր կտրած ծովի վրա:

Աւելի խաւար ու ցած են իջնում ամպերը ծովի վրա և երգում են, ու ալիքները թռչում են վեր, որոտին ընդառաջ:

Որոտը ճայթում է: Բարկութեան փրփուրի մէջ հառաչում են ալիքները՝ քամու հետ վիճելով: Ահա գրկում է քամին ուժեղ բազուկներով ալիքների խմբեր ու շպրտում է վայրենի չարութեան մի ճօճումով ժայռերի վրա, զմրուխտեայ կոյտը շիթ ու փոշի դարձնելով:

Մրրկահաւը ճիչով ճախրում է, սև կայծակի նմանութեամբ, որպէս սլաք ամպերն է խոցում, ալիքների փրփուրը թևերով գզլում:

Ահա նա թռչում է, որպէս դև, փոթորկի սև դև, և ծիծաղում է, հառաչում… Նա ամպերի վրա է ծիծաղում, նա ուրախութիւնից է հառաչում:

Որոտի կատաղութեան մէջ, զգայուն դև, նա վաղուց դադարել է լսելուց. նա հաւատացած է, որ ամպերը չեն ծածկի արևին, ոչ, չեն ծածկի:

Քամին բուվում է… որոտը ճայթում է…

Կապոյտ բոցերով բոցավառվում է ամպերի խումբը անդունդ ծովի վրա: Ծովը որսում է կայծակի սլաքները և հանգցնում իր յորձանքում: Կարծես կրակէ օձեր հիւսվում են ծովում, կորցնելով այդ կայծակների ցոլումները:

Փոթորիկ: Շուտով կը թնդայ փոթորիկը:

Այդ համարձակ մրրկահաւն է հպարտ ճախրում կայծակի մէջ, մռնչացող ծովի վրա. նա յաղթութեան մարգարէն է կանչում.

— Թող էլ ուժեղ թնդայ փոթորիկը:

Արշալոյս Տէր-Յովհանեանց

ՀԱՐՍԱՆԵԱՑ ՕՐԸ

(Ա. Բատտկէյից)

Ննջարանը համարեա մութն էր: Անձրևը ծանր կաթիլներով զարնվում էր պատուհանների ապակիներին:

Ալինան ցուրտ զգաց, և դարձեալ սողաց վերմակի տակ: Ալինան՝ նստած՝ նրան էր նայում կէս ժամ: Կնոջ նայուածքում կար շատ ջերմ քնքշութիւն. և քանի դեռ նրա ամուսինը չէր շարժվում, Ալինան թեքվեց նրա դէմքին, այնպէս որ իր ծամերը ընկան նրա գունատ ճակատին: Չը նայած դրան, նա միայն շրջվեց միւս կողքի վրա:

Ալինան տխրութեամբ յետ քաշվեց: Չէ՞ որ իր հարսանեաց օրն է այսօր… Ինչո՞ւ նա չը զարթնեց: Եւ Ալինան սկսեց մտածել այն մասին, թէ ինչ էր մի տարի առաջ, և ցուրտ զգաց ու փաթաթվեց վերմակի մէջ:

Այդ բոլորը ոչինչ է և աւելի լաւ է նորից քնել:

Միթէ դա մի տարի առաջ էր, երբ ինքը զարթնեց վաղ վաղ և անհամբերութեամբ սպասում էր այն րօպէին, որը պիտի միացնէր նրանց յաւիտեան: Իսկ յետոյ պսակադրութիւնը, խնճոյքը, հրաժեշտը և նրա բնակարանը ժամանելը: Նա ինչ քնքոյշ կերպով գրկեց իրան, երբ իրանք կանգնած էին այստեղ, ննջարանում… Իսկ երբ երկիւղը պատեց իրան և ինքը արտասվեց, ինչպէ՜ս էր նա համբուրում իրան և շշնջում սիրալի՜ր, քնքո՜յշ խօսքեր:

Սակայն Ալինան ոչ մի կերպ չը կարողացաւ ընտելանալ իր տան փարթամութեան: Նրան յետ էր քաշում իր ծնողական համեստ տան նրբութիւնը:

Երբեմն Ալինան լաց էր լինում, իսկ այդ բանը զայրացնում էր ամուսնուն: Փառք Աստուծոյ, որ բարեկամները ամուսնուն յաճախ ժողովարան էին հրաւիրում, ուր զուարճանում էր նա, իսկ ինքը Ալինան կարող էր կուշտ արտասվել: Բայց ամուսինն աւելի էր մնում ժողովարանում և ուշադրութիւն չէր դարձնում նրա թախանձանքներին:

Եւ խեղճ կինը համոզվեց, որ տանջվում է ամուսնու սիրուց և փաղաքշանքներից: Նա այդ խոստովանվեց իր ամուսնուն: Իսկ նա նրան անուանեց յիմար և այնուհետև այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում:

Եւ այսօր՝ ահա նրանց հարսանեաց տարեդարձն է:

Ալինան լսելիքը լարեց: Ամուսինը դեռ քնած էր:

Այդ ժամանակ Ալինան վերմակը մի կողմը ձգեց և ցատկեց յատակի վրա:

— Ո՜ւֆ, ինչ ցուրտ է…

Կինը գնաց իր առանձնասենեակը. այնտեղ, պահարանի մօտ, վարդ կար:

Ալինան քնքշօրէն վերցրեց ծաղիկը և համբուրեց. ապա դանդաղ կերպով վերադարձաւ և վարդը դրեց ամուսնու վերմակի վրա:

Ինչպէ՜ս կուրախանայ նա, երբ արթնանայ:

Կինը նորից անկողին մտաւ. նրա ատամները իրար էին զարկվում ցրտից: Ա՜խ, գոնէ շուտով զարթնի ամուսինը:

Ահա նա շարժվեց:

Ալինան թեքվեց: Հէնց այս րօպէիս ամուսինը կը բացէ աչքերը և կը տեսնի վարդը:

Սակայն նա ձեռքը վերմակին քսեց և նրա շրթունքները պարզ կերպով շշնջացին կանացի մի անուն:

Ալինան ցուրտ է զգում, ամբողջ մարմնով սարսուռ է անցնում: Նա լսեց ոչ իր անունը, ոչ: Նա նայում է ամուսնուն, և վարդեան աղօտ աղջամուղջում ամուսնու դէմքը նրան թւում է ծերացած և յոգնած:

Եւ յանկարծ նրա համար բոլորը պարզվում է— ամուսնու թանգագին ընծաները, ուշ վերադառնալը, մուշկի անուշահոտութիւնը՝ որով սրսկված էր նրա հագուստը:

Մահվան գունատութիւնը դէմքին յետ է տանում վարդը, իսկ Ալինայի կիսաերեխայական թշերից կաթում են արցունքի խոշոր կաթիլներ: Ալինան ոչինչի մասին չէ մտածում, այլ բնազդօրէն միայն զգում է, որ իր առջև այժմեանից անծայր, աղօտ դատարկութիւն է:

Իսկ այսօր միայն մի տարի է…

Լ. Վէլումեան

վի նահ. հիւ. 863, մեռ. 489. Կարսում հիւ. 13, մեռել 2. Օձակում հիւ. 280, մեռել 155. Ռօստով Դ./Վ. հիւ. 21, մեռ. 2. Քութայիսում հիւ. 19, մեռ. 9. Նահ. հիւ. 51, մեռ. 30. Երեւանում հիւ. 70, մեռ. 47. Նահ. հիւ. 102, մեռ. 51. Բաթումում հիւ. 6. Դաղստանի շրջանում հիւ. 110, մեռ. 49. Մէնզէլինի գաւ. օգ. 1—7 հիւ. 1066, մեռ. 518. Օդեսայում հիւ. 25, մեռ. 16։

Օդեսայի զուման արտակարգ նիստում որոշել է միջնորդել ներքին գործերի մինիստրի առաջ, որ թոյլ տրվի 500,000 րուբլու փոխառութիւն կնքել խոլերայի և ժանտախտի դէմ մաքառելու համար։

Օդեսայում, ի նկատի ունենալով օտար քաղաքների ժամուլում երևացած լուրերը քաղաքում համաճարակի ընդարձակ տարածման մասին, տեղի ունեցաւ արտակարգ նիստ մասնակցութեամբ քաղաքապետի, գլխաւոր տեսուչ Մալինօվսկիի, բժ. Դամասկինի և հիւպատոսների։ Նիստում պարզվեց այդ լուրերի բովանդակ անհեթեթութիւնը։ Բժ. Դամասկինը յայտնեց, որ, միջազգային դաշնագրութեան համաձայն, ոչ մի քաղաք չէ կարող ենթարկվել կարանտինայի չէզոքացման։ Նիստը ազգաբնակութեան վրա հանգստացուցիչ տպաւորութիւն գործեց։

Հաօժ. — Ապուլիում օրվայ մէջ խոլերայով հիւանդացան 20, մեռան 17։

22 օգոստոսի

Պետերբուրգ. — Գործակալութեան ստացած տեղեկութիւնների համաձայն մի շաբաթում Բագւում խոլերայով հիւանդացել են 86, մեռել են 36, բժշկվում են 95։

Մի օրում մայրաքաղաքում հիւանդացան 56, մեռան 14, կան 682։

Օդեսա.— Եկաւ Կենիգսբէրգի համալսարանի պրոֆեսոր Նէյմանը, որին գերմանական կառավարութիւնը ուղարկել է ժանտախտի դէմ գործադրվող միջոցների հետ ծանօթանալու համար, և այցելեց ժանտախտային բարակները և բակտէրիոլոգիական կայանը։

Նովօչէրկասկ.—Ժանտախտի մուտքը խափանելու նպատակով հաստատվեցին 7 մկնասպան խմբեր և բժշկա-հսկիչ կայաններ։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կօջօրից վերադարձաւ ընտանիքով Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլօվը։

◆ Փոխարքայի օգնական սենատոր Վատացին հանքային ջրերից եկել է Վլադիկավկազ, որտեղից ճանապարհ է ընկել դէպի Թիֆլիս։ Մի քանի օրից յետոյ ռազմավիրական ճանապարհով Թիֆլիս կը ժամանէ արդարադատութեան մինիստր Շչեգլովիտօվ։

◆ Թիֆլիսում, բաւական չէր որ խոլերան երևաց, հետզհետէ ուժեղանում է ժանտախտի երկիւղը. այժմ էլ նոր աղէտ է երևան եկել. բաւական առատ հունձ է տանում տիֆ վարակիչ հիւանդութիւնը, առանձնապէս երեխաներից։ Մինչև այժմ երևան է հանված մօտ 50 հիւանդութեան դէպք։

◆ Պրոֆ. Էրլիխի «606» պրէպարատը շուտով կը գործադրվի նաև Թիֆլիսում։ Նախակարապետներ այդ գործում հանդիսանում են բժիշկներ Իսրամանեան և Մայսուրեան, որոնք շտապել են ձեռք բերել այդ նոր գիւտը և կատարել նախնական փորձեր սիֆիլիսով և ջերմախտով հիւանդների վրա։

◆ Ոչ քաղաքային ինքնավարութեան պարտադիր որոշումները, ոչ ոստիկանութեան խստութիւնները կարող չեղան սանձել հացթուխներին թխել 3-րդ տեսակի հաց չքաւոր դասի համար։ Մինչև օրս կազմված կան մօտ 75 արձանագրութիւններ։ Այժմ իշխանութիւնը մտադիր է ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ յիշեալ երևոյթի առաջն առնելու նպատակով։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը, համաձայն կովկասեան գլխաւոր իշխանութեան միջնորդութեան, Թօյլատրեց յետաձգել Նոր-Բայազէտի 195 բնակիչների մատակարարական պարտքի գանձումը երեք տարով. պարտքի գումարն է 4,629 ր. 25 կ.։

◆ Երկրագործութեան գլխաւոր իշխանութիւնից 376 րուբլի է յատկացված Կովկասեան Տնայնագործական Կոմիտէտին՝ Կովկասի գորգագործութեան արհեստի ուսումնասիրութեան մասին ձեռնարկ հրատարակելու համար։

◆ Թիֆլիսում վերջերս սկսել է դարձեալ շոգեր անել։ Միւս կողմից ուսումնական տարվայ սկիզբը ստիպել է մեծ թւով ընտանիքների քաղաք վերադառնալ, որով և կեանքը աստիճանաբար սկսում է եռալ։

◆ Վրաց ազնուականութեան մի քանի ներկայացուցիչներ ներկայումս բանակցութիւններ են վարում Կախէթիայում այն կալուածատէրերի հետ, որոնց հողերի միջով անցնելու է ապագայ երկաթուղին։ Բանակցութիւնների նպատակն է յիշեալ կալուածատէրերին դրամի փոխարէն ակցիաներ գնել տալ իրանց հողերի համար։ Գործի գլուխ կանգնածները յոյս ունեն այդպիսով ծախել մօտ 400,000 ակցիաներ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը պաշտօնեայ Իգնատիէվին ուղարկում է ծանօթանալու գիւղատնտեսական հաստատութիւնների հետ Մոսկվայի, Տուլայի, Եկատէրինօսլավի, Կիևի, Խէրսոնի և Տաւրիկեան նահանգներում, ինչպէս նաև Կովկասում։

◆ Ներքին գործերի մինիստրը Պետական Դումա մտցրեց ծաղկի պատուաստման մասին մի նոր օրինագիծ։ Նախագիծը ձգտում է պատուաստման պարտադիր լինելը։ Պարտադիր պատուաստումներ պահանջվում են միայն բոլոր կրթական հաստատութիւնները մտնողներից, կառավարական և հասարակական հաստատութիւնների ծառայողներից, նաև երկաթուղային և նաւային ծառայողներից ու բանւորներից։

◆ Նկարիչ Բիլիբինին յանձնարարված է Մարիա Կայսրուհու վարչութեան կողմից՝ կատարել նոր խաղաթղթերի էսքիզներ, որոնց վճռված է գործադրութեան հանել մօտիկ ապագայում նախկին խաղաթղթերի փոխարէն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Գրօզնա, 16 օգոստոսի

Ամսիս 14-ին տեղիս ծխ. դպրոցի դահլիճում, դերասան Գալստեանը, մասնակցութեամբ տեղիս սիրողների, տուեց մի ներկայացում. ներկայացրին «Արսէն» դրաման 3 գործ.։ Ընդհանուր առմամբ խաղն անցաւ սահուն։ Դերասան Գալստեանը վարձատրվեց ծափահարութեամբ։ Նա այս մի քանի օրս կը ճանապարհվի Ղզլար, այնտեղ մի շարք ներկայացումներ տալու։

Ներկայացումից մնաց զուտ արդիւնք 25 ր.։ Ղահրամանեան

—

Ուզունթալա, 13 օգոստոսի

Ամսիս 8-ին Ուզունթալա եկող ամառանոցաւորների երիտասարդ սիրողները մի ժողովրդական ներկայացում տուին. խաղացվեցին «Խօլերա» և «Մուկուճի հարսանիքը» պիէսները։

Սիրողների խաղը միջակ էր, բացի մի երկուսից։

Ներկայացումը ձրի էր. նպատակը ժողովրդին գաղափար տալն էր թատրոնի մասին։ Ցաւալի էր, որ գիւղացիներից ոչ մի մարդ չր կար, այլ միմիայն ամառանոցաւորներն էին։ Ալէքսր Ռոստոմեան

—

Զաքաթալա, 17 օգոստոսի

Ամսիս 16-ին մեր դպրոցի դահլիճում ուսանող Աւետիք Սալի-Բէկեանը մի հանրամատչելի գիտական դասախօսութիւն կարդաց հայերէն լեզուով՝ բժժի վրա զանազան փորձեր անելով գործիքներով. և ապա՝ ռուսների խնդրանօք՝ կրկնեց նոյնը ռուսերէն լեզուով։

Դասախօսութիւնից յետոյ դերասան Գէորգ Մօսեանը տեղիս սիրողների մասնակցութեամբ ներկայացրեց Էմին Տէր-Գրիգորեանի «Վայրենի» վօդվիլը։ Վայրենու դերը Մօսեանը բնական կերպով տարաւ մինչև վերջ. հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով վարձատրեց նրան։

Ցաւում ենք միայն, որ մեր աղքատիկ դպրոցը այս անգամվայ ներկայացումից շատ աննշան արդիւնք ունեցաւ։

Աստ. Բէկ-Յովսէփեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Սամարղանդ, 10 օգոստոսի

«Մշակի» մէջ լոյս տեսան երկու թղթակցութիւններ, մէկը № 143-ում «Sero» ստորագրութեամբ, միւսը № 161-ում Զարջօյից՝ ութ անձանց ստորագրութեամբ։

Որովհետև թէ առաջինում և թէ վերջինում շօշափվում է իմ անձնաւորութիւնը, կապելով այն որոշ հասարակական բնոյթ ունեցող հարցերի հետ, ուստի ստիպված եմ զգում ինձ՝ պատասխանել այդ թղթակցութիւններին։

Սխալ են պատմել Sero-ին այն, թէ իմ և ինչ-որ երիտասարդի միջև պայքար է տեղի ունեցել եւս տապալվել եմ, որպէս հոգաբարձու։ Իմ հոգաբարձութիւնից հրաժարվելը տեղի է ունեցել, 1908 թ. դեկտեմբերի 14-ին գրաւոր կերպով. ու ես շեշտել եմ պաշտօնակիցներիս չափազանց թոյլ և անհոգ վերաբերմունքը դէպի դպրոցի դրամական հաշիւները։

Ես այդ արել եմ երկար փորձերից, յորդորներից և պահանջներից յետոյ, այն էլ երբ համոզվել եմ, որ դպրոցը թէ կրթական և թէ նիւթական կողմից խաղալիք է դարձել, որպիսի պայմաններում միայն հոգաբարձական կազմի մէջ նշանակում էր ակամայ մասնակից լինել նրա անխուսափելի անկման։

Sero-ի յիշեալ յօդուածը մասի փաստաթան դարձնելով հանդէս է գալիս ութ անձնաւորութիւններից մի խմբակ՝ ապացուցանելու որ՝

1) Ես դպրոցի օգտին «Խորհուրդ մեծ» շրջող ուսուցիչ Գ. Սարգսեանի և 20 աշակերտների առաջ տանս դուռը փակել եմ տուել.

2) Դպրոցի օգտին տրված ներկայացման հաշիւր ականջի ետև եմ ձգել.

3) Քահանայի բնակարանը շինելիս, երբ նա հասել էր մինչև պատուհանը, ես քանդել եմ տուել, ասելով թէ իմ ծախքով այրած աղիւսից շինվի, բայց ոչ մի կոպէկ չեմ տուել.

4) 1909—1910 թ., երբ առաջարկում էին ժողովրդին ծխ. տուրքը ստորագրել, ես ասել եմ՝ «ձեր ստորագրութիւնը էժան մի ծախէք, նա վէքսել է», որից յետոյ ժողովուրդը խրտնել, դուրս է գնացել, որով ուսումնարանի դռները փակ են մնացել։

Առաջին կէտին կը պատասխանեմ, որ ամբողջ Զարջօյին յայտնի է մի դէպք, որի պատճառով Սարգսեանը վաղուց է որ իմ տունս ոտք դնել չէ կարող։ Այդ պատճառով էլ յիշեալ պարոնը, երևի արհեստական համարձակութիւն ստանալու մտքով, մի քիչ կոնծում է, բայց այդ քիչը դուրս է գալիս սպասածից այնքան շատ, որ գիշերապահի ուշադրութիւնը իր վրա է դարձնում. մինչև անգամ նրա հարցին պատասխանում է, թէ գնում են մասզաշատ, և ապա ինչ-որ պատճառով կռիւ է սարքում գիշերապահ Պետրոսի հետ և ուսուցչին մեր դարվազի մօտ թողնելով՝ ինքը հեռանում է։

Թէ ինչու ուսուցիչը ներս չէ մտնում ինձ մօտ, չեմ կարող ասել. միայն կասեմ, որ մեր դուռը թակող չէ եղել, մի բան՝ որ պնդում է նաև գիշերապահը։

Երկրորդ կէտի մասին այսքանը կասեմ, որ մի մարդ, որ դպրոցի օգտին իր գրպանից հարիւրներ է տուել և հրաժարում է հոգաբարձական պաշտօնից, երբ հաշիւների մաքրութեան վերաբերմամբ իր արած պահանջները չեն կատարվել, նա չէր կարող որևէ մի ներկայացման հաշիւներն ականջի ետև գցել։

Գալով քահանայի բնակարանի շինութեան, ճիշդ է որ ես համոզեցի քանդել և այրած աղիւսից շինել նրա ճակատը, բայց Զարջօյի նամակագիր խմբակը սխալ է վկայում, թէ ես խոստացել եմ իմ հաշւով շինել, քանի որ այդ շինութեան ծախսին մասնակցում էին Զարջօյի բոլոր հայերը՝ տալով իրանց նպաստը՝ բացի յիշեալ թղթակցութեան տակ ստորագրողներից մի քանիսից։

Ինչ վերաբերում է ծխ. տուրքի ստորագրութեան օր իմ նախազգուշացման, թէ «ձեր ստորագրութիւնը էժան մի ծախէք», միանգամայն ճիշդ է, և ուրիշ կերպ էլ վարվել չէի կարող։ Դպրոցը պահվում է փողով և ոչ խօսքով (Իսրայէլ Գասպարեանը նուէր է ստանում Միր. Սաղիեանից 100 ր. և տալիս դպրոցի վարժուհուն, որ դատարանից գանձած էր ներկայացրել հոգաբարձութեան վրա։ Դատարանը հոգաբարձութեան կողմից պահանջում է 95 ր.։ Արդեօք այդ չէ՞ր ուսումնարանի փակման պատճառը)։ Տարիների դառն փորձը ցոյց էր տուել և ցոյց է տալիս, որ շատ ստորագրութիւններ խօսքից էլ անհիմն են։ Դրան ապացոյց կարող է լինել այն, որ իմ այս խօսքից յետոյ շատերը հեռացան։ Նրանք, որոնք ստորագրելուց յետոյ պատրաստ էին իրանց ստորագրած գումարը վճարելու, հարկ չր կար որ հեռանային. բայց քանի որ հեռացան, նշանակում է, որ նրանք չր պիտի վճարէին, թէկուզ երկու ձեռքով ու երկու ոտքով էլ ստորագրած լինէին։ Նման օրինակներ շատ ենք տեսել։

Այն-ինչ՝ դպրոց պահելու համար հարկաւոր է հնչիւն դրամ և ոչ դատարկ ստորագրութիւն։

Բայց ոչ այս էր պատճառը, որ 1909—10 թ. դպրոցի դռներ փակվեցին, և ոչ այն, այլ անվստահութիւնը, որին մի տարվայ գործունէութիւնից յետոյ արժանացաւ «Թարմ ույժերից» բաղկացած հոգաբարձութիւնը։

Որքան էլ տգէտ լինի ժողովուրդը, այնուամենայնիւ նա փորձով գիտէ, որ այնտեղ, ուր կռիւ, պայքար և խարդաւանք կայ, այնտեղ գործ լինել չէ կարող։

Իմ համեստ խորհուրդն է՝ թողնել անհիմն բամբասանքը և միանալ ժողովրդին ու լսել «Մշակի» № 52-ում տպված կոչին։ Պէտք է աշխատել գոնէ 1910—11 թ-ին վերաբանալ փակ դպրոցի դռները։

Աւետիս Տէր-Գալստեան

—

Դերբենդ, 17 օգոստոսի

1907 թ. սեպտ. սկզբին Դերբենդի հայոց եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը ինձ հրաւիրեց իր խնամքին յանձնված դպրոցի համար ուս.-ուսուցչի պաշտօնով և այդ պաշտօնը վարեցի 3 տարի շարունակ՝ մինչև 1909/10 ուսումն. տարվայ վերջը։ Սակայն 1909/10 ուսումն. տարվայ կիսին Թեմիս դպրոցական խորհուրդը հրաւիրեց Թեմ. տեսչի պաշտօնով Ներսէս վ. Տէր-Միքայէլեանին, ուստի և առաջիկայ 1910/11 ուսումն. տարվայ համար հոգաբարձութիւնը՝ նախ քան ուսուցիչների հետ պայմանաւորվելը պաշտօնավարող ուսուցիչների վերաբերմամբ՝ ուզեց իմանալ Թեմ. տեսչի կարծիքը։

Ես, որ իմ խղճի առաջ հանգիստ էի, որովհետև քաջ գիտակցում էի, որ ես իմ 3 տարվայ պաշտօնավարութեան ընթացքում աշխատել իմ դպրոցի բարգաւաճման համար և իմ պաշտօնավարութիւնից միշտ գոհ են եղել թէ հոգաբարձուները և թէ ժողովուրդը, համոզված էի, որ իմ պաշտօնին կրկին հրաւիրվելու եմ. և այդպէս էլ եղաւ։ Դասերից յետոյ գնացի Աստրախան, որտեղ և ստացայ հոգաբարձութեան յունիսի 24-ի № 80 գրութիւնը, որով հոգաբարձութիւնը Թեմ. տեսչի յունիսի 21-ի № 21 գրութեան համաձայն հրաւիրում է դարձեալ իմ պաշտօնին մէկ տարի ժամանակով և նախկին պայմանով։

Աստրախանից վերադառնալով յուլիսի 5-ին տեղեկանում եմ, որ տեղիս օրիորդաց գիմնազիայում լինելու են հայոց լեզուի ազատ դասեր (անցեալ տարի 4 դաս ունէի ռէալական դպրոցում) և որ այդ դասերը ինձ են մնալու. խորհրդակցեցայ հոգաբարձութեան նախագահի հետ. ինձ խորհուրդ են տալիս ձեռքից չր թողնել պետ. դպրոցները, որոնք աւելի ապահովում են մարդուն, քան թէ հայոց ծխ. ուսումնարաններ։

Մնալով հայոց ուսումնարանում ուս.-ուսուցիչ՝ չէի կարող վերցնել այդ դասերը. ուստի ինձ մնում էր կամ հրաժարվել պետական դպրոցներից և կամ դպրոցի ուս.-ուսուցչութիւնից, և ես հոգաբարձութեան և ուրիշների խորհրդով որոշեցի վերջինը և մի յայտարարութեամբ դիմեցի հոգաբարձութեան ու խնդրեցի ազատել ինձ ուս.-ուսուցչի պաշտօնից և թողնել երկրորդ ուսուցիչ շաբաթական 20—22 դասով։

Հոգաբարձութիւնը ընդունեց առաջարկութիւնս և այդ մասին յայտնեց Թեմ. տեսչին։ Վերջինս, որպէսզի ինձ նեղ պայմանների մէջ դրած լինի, առաջարկեց ինձ 22 դաս, որից 6-ը կրօնի, 6-ը երգեցողութեան և նաև եկեղեցու համար երգեցիկ խումբ պատրաստել և ամեն կիրակի ու տօն օրերին պատարագին երգել, մինչդեռ այս վերջինը մեր ուսումնարանի ուսուցիչներից երբէք չէ պահանջվել։ Հոգաբարձուները, նախորդ տարիների փորձերից քաջ իմանալով որ չէ աջողվելու դպրոցից եկեղեցու համար խումբ կազմակերպել, խմբի և երգեցողութեան դասերի համար առաջարկեց եկեղեցու դպրի թեկնածութիւնը. սակայն Թեմ.տեսուչը մերժեց հոգաբարձութեան յայտարարութիւնը և ինձ յայտարարեց ազատ իմ պաշտօնից։ Այդ անսպասելի կարգադրութիւնը հոգաբարձութեանը շշմեցրեց. սա բանաւոր դիմեց ինձ և առաջարկեց վերցնել երգեցողութեան դասերն ու խմբապետութիւնը։ Ես ճարահատեալ համաձայնվեցի ընդունել հոգաբարձութեան այդ առաջարկութիւնը և հոգաբարձութիւնը յուլիսի 30-ին մի գրութեամբ դիմեց Թեմ. տեսչին, խնդրելով ինձ հաստատել վերոյիշեալ պաշտօնում։ Իսկ Թեմ. տեսուչը, որ արդէն հասել էր իր նպատակին և լուծել տարիներից ի վեր իր սրտում սնուցած վրէժը*), 10 օր պատասխանը ուշացրեց (ինքը լինում է Բագւում. իսկ Բագւից նամակը գալիս է երրորդ օրը) և օգոստոսի 10-ին յայտնում է, որ ինքը չէ կարող քանդել իր որոշումը, և առաջարկում է հոգաբարձութեանը կազմել նոր ուսուցչական խումբ։

Իսկ ինձ, որ երեք տարի մաքուր և բարեխղճօրէն ծառայել եմ դպրոցին, դուրս է նետում փողոց մի այնպիսի ժամանակ, երբ բոլոր դպրոցների ուսուցչ. խմբերը կազմված են։

Հոգաբարձութիւնը, մտնելով դրութեանս մէջ, դեռ ես թոյլ է տալիս օգտվելու դպրոցի սենեակներից, սակայն շուտով կը գան նոր ուսուցիչները, և ես մնացել եմ շուար. ուր գնամ, որտեղ տեղաւորեմ իմ ընտանիքը։

Մի՞թէ արդարութիւն է՝ դուրս շպրտել ընտանիքով ծանրաբեռնված մի ուսուցչի այն պատճառով, որ նա յանդգնութիւն է ունեցել խնդրելու իրան ազատել ուս.-ուսուցչի պաշտօնից, կամ թէ այդպէս անմարդավայել կերպով վրէժ լուծել մի քանի տարի առաջ պատահած դէպքերի առիթով։

Դերբենդի դպրոցից արձակված ուս.-ուսուցիչ՝ Ռուբէն Տէր-Գրիգորեան

ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ*)

3) «Տեսուչն աչառու վերաբերմունք է ցոյց տուել դէպի ուսուցիչները, մի մասին երկինք բարձրացնելով, իսկ միւս մասին անդունդը գլորելով»... Եթէ դուք, անմոռաց հոգաբարձուներ, իմ կողմից աչառու վերաբերմունք էք տեսել, ինչու ժամանակին չէք նկատել ինձ ու անարգանքի արժանացրել։ Կանգնեցրէք, խնդրեմ, բոլոր ուսուցիչներին և նրանց, որոնց մասին աննպաստ կարծիք եմ յայտնել. ազնիւ խօսք առէք նրանցից, ապա ձեռքները խղճների վրա դնել տուէք ու հարցրէք, թէ այս վերջին կամ ամբողջ երկու տարվայ ընթացքում երբ և ո՞ր դէպքում նրանք իմ կողմից աչառու վերաբերմունք են նկատել դէպի մէկը կամ միւսը. եթէ նրանք ձեզ մի լուրջ փաստ տան, ապա ես պատրաստ եմ հրապարակով մեղքս քաւելու։ Ցիրաւի, այս տարվայ տեղեկագիրը յունիսի 19-ի հոգ. ժողովում կարդալուց յետոյ հոգաբարձուներից մէկը մեղմ, բայց լսելի ձայնով ասաց՝ «միակողմանի է» և միայն այսքան. դրան սակայն նախագահ Եղիշէ վարդապետն անմիջապէս մտաւորապէս հետևեալը վրա բերեց. «Իսկ ես այդպիսի բան չեմ նկատում. իմ տպաւորութիւնն ընդհակառակ այն է, որ գործ կատարած և արդիւնք ցոյց տուած ուսուցիչները գովեստի են արժանացել, իսկ որոնք նման արդիւնք չեն ցոյց տուել, բնականաբար չեն գովաբանվել»։ Ապա շարունակեց. «Իմացած եղէք, պարոններ, որ ես թոյլ չեմ տայ վայր ի վերոյ խօսելու. ով ինչ նկատողութիւն ունի, փառք Աստուծոյ մի-մի մատիտ առած դիտողութիւններ էիք անում, թող ասի. ես այդ ամենը մանրամասն արձանագրել կը տամ, տեսուչն էլ կը պատասխանի իւրաքանչիւրին, այդ էլ արձանագրել կը տամ, որպէս զի, եթէ գործ բացվի, բոլորն ուղարկեմ ուր հարկն է»։ (այս խօսքերից շատ պարզ է, որ եռանձնեայ հոգաբարձութիւնը առաջուց որոշել էր խումբն արձակել, հետևաբար նրան դեռ անծանօթ տեղեկագրիս մէջ յայտնված կարծիքները ուսուցիչների մասին չէին կարող իմ դէմ մեղադրական կէտեր ծառայել)։ Հ. նախագահի այդ խօսքերին բոլորդ էլ, պ. պ. հոգաբարձուներ, հաւանութիւն տուիք «ի հարկէ, ի հարկէ, այդպէս էլ պէտք է» ասելով, սակայն այդ նիստին ոչ մէկդ ոչ մի բառ անգամ չասաց, և ձեր «նկատողութիւնները» յաջորդ ժողովին թողիք. սակայն այդ ժողովում էլ (երեքդ էիք ներկայ) ոչ մի դիտողութիւն չարիք. արդ՝ եթէ աչառու վերաբերմունք էիք նկատել, ինչու քաջութիւն չունեցաք ճակատիս ասելու և ձեր փաստերը մէջտեղ բերելու. ում խաբելու համար էք սարքել ձեր 10 կէտերը։ Ձեր այդ կեղտոտ զրպարտութեան համար այսօր «փաստ» էք բերում Լ. Թախտաճեանին և Գ. Տէր-Մինասեանին, որոնց, ասում էք, անցեալ տարի գովել եմ։ Ձեզ էլ կարծում եմ, յայտնի պիտի լինի (իրան քաջ յայտնի է), որ ես Թախտաճեանին հարազատ եղբօր պէս սիրել ու սիրում եմ. ես եմ նրան ուսուցիչ հրաւիրել. վկայել եմ նրա թէ արժանաւոր և թէ այս տարի ցոյց տուած պակասաւոր կողմերը. արդ՝ եթէ նա իր պատւոյն ու ազնւութեամբը, որ իմ կողմից երբէք կասկածի չէ ենթարկվել, կը հաւատացնի ձեզ, թէ ճշմարիտ չէ իր մասին այն անգամվայ յայտնած կարծիքն էլ, ապա ես նորից կը խօսեմ։ Ինչ Գ. Տէր-Մինասեանին է վերաբերում, ապա առաջարկում եմ ձեզ նորից կարդալ անցեալ 1908/09 ուս. տարվայ տեղեկագրիս նրա վերաբերեալ մասը. այնտեղ կը գտնէք նրա անունը հայոց լեզուի մի այլ ուսուցչի անուան հետ յիշատակված և այդպէս անցկացրած. վերակացուական պաշտօնի գնահատութիւնը չէ արված և ոչ մի խօսքով, այն ինչ նրա միւս ընկերոջ պաշտօնավարութիւնը գնահատված է ըստ արժանւոյն. արդ՝ երբ միևնոյն պաշտօնը վարող 2 անձերից մէկը գնահատութեան է արժանանում, իսկ միւսի մասին կատարեալ լռութիւն է պահպանվում, ինչ է նշանակում այդ հանգամանքը, խելացի պարոններ, գովեստ. համեմատեցէք և տեսէք, այս տարի խօսված է նրա Ա. և Բ. դասարանների հայոց պատմութեան դասաւանդութեան և վերակացութեան մասին, ուրտեղ է հակասութիւնը. ընդունեցէք, պարոններ, որ խեղդվողի պէս ձեռքներդ այս ու այն կողմն էք ձգել մի բան բռնելու, բայց ի զուր։

4) Տեսուչը վարչական մարդ չէ, որովհետև մանկ. ժողովները միշտ աղմկալից են եղել, աշակերտները թողել են դասերն և ինքնակամ հեռացել, շատ անգամ վիրաւորել են ուսուցիչների և անպատիժ մնացել։

Որ տեսուչը, ներվի ինձ ասել, խիստ վարչական մարդ է եղել, ապացոյց աւելի քան 40 մարդու ներկայութեամբ ձեր կողմից ներբողներով նրան մատուցած ոսկեայ ժամացոյցը և դպրոցի այն կերպարանքը, որ նա ստացել է վերջին երկու տարում։ Այժմս մարդիկ ունէք տեղաւորելու թէև հոգիվարքի մէջ՝ ձեր խնամէական մեծ պարտքն էք ուզում կատարած լինել, հարկաւ ուրիշ լեզու էք բանեցնելու։ Բայց ասացէք խնդրեմ, ուրտեղից գիտէք, որ մանկ. ժողովները, այն էլ միշտ, աղմկալից են եղել, երբ ձեզանից ոչ մէկը մանկ. ոչ մի ժողովի, նոյնիսկ մի րոպէով, ներկայ չէ գտնվել. եթէ փողոցային գեղջայի մէկը ձեզ յայտնած լինէր թէ ֆլան օրը ուսուցիչները ժողովում միմեանց վրա ատրճանակ են քաշել, պէտք է հաւատայիք։ Միւս կողմից ո՞ր դպրոցում աղմկալից ժողովներ տեղի չեն ունենում և ստիպում նախագահին՝ ժողովը փակելու. բայց մեզանում այսպիսի դէպք չէ պատահել։ Չէ՞ որ մանաւանդ դուք, ժողովրդի ընտրեալ սիրասուններ, աղմկալից ժողովների մասին ծպտուն անգամ չը պիտի հանէք, որովհետև ձեր 3—4 հոգուց բաղկացած ժողովներում, կարգ ու կանոնի չեմ ասում, վայելչութեան և ամօթի ոչ մի սահման չէ ճանաչվել։ Մի լաւ յիշեցէք, շատ մօտիկ անցեալում, պատւազգացները, նրանց հետ և նախագահ Եղիշէ վարդապետը, հեռացան սկանդալիստներից—ժողովից. բայց վերջը կարողացաք, չը գիտեմ ինչ միջոցներով, խռոված և ժողովների չեկող նախագահի սիրտն առնել և նրա հետ գրկախառնված՝ ձեր սխրագործութիւններն առաջ տանել... Կրկին հարցնում եմ, ո՞վ է ասել ձեզ, և ի՞նչ դէպք կը մատնանշէք յականէ յանուանէ, երբ աշակերտները կամովին թողած լինէին դպրոցն ու հեռացած և անպատիժ մնացած. այդ շատ խիստ չարամիտ զրպարտութիւն է։ Դ. և Ե. դասարանցիք Աղամալեանի դասը թողել հեռացել են, բայց լաւ յիշեցէք, թէ ինչպէս խստագոյնս պատժվել են մեր կողմից. յիշեցէք, որ մեր խիստ պատիժները մեղմացնողներն էք եղել դուք։ Յիշո՞ւմ էք, երբ տարվայ վերջերը Ե. դ.-ից 3 հոգի այդ միևնոյն ուսուցչին ձեր առաջ լաւ վկայական տալով հեռացան, ես էի, որ այդ աշակերտներին ներս չէի առնում, և դուք էիք, յատկապէս մէկը ձեզանից, որ խնդրում, աղաչում էիք, որ մի կերպ անցկացնեմ և ներս առնեմ... Հիմա այդ ո՞ւմ վրա էք ուզում կեղտ գնել. դրա համար ձեզ պատշաճ անուն տամ։ Չէ՞ պատահել նոյնպէս մի այնպիսի դէպք, երբ ուսուցիչը վիրաւորած լինի աշակերտներ ու անուշադրութեան թողնված։ Մանկ. ժողովների արձանագրութիւններով ձեզ ցոյց կը տամ, որ այդպիսի դէպքերում ամենախիստ պատիժների խնդիրն է դրվել, բայց յաճախ ուսուցչի ներողամտութիւնը թեթև պատժով է գոհացել։

5) «Ուսուցիչ Թախտաճեանի վկայութեամբ աղօթքներ չեն կարդացվել Ե. և Զ. դասարաններում և մի ուսուցչի բողոքը մնացել է ապարդիւն տեսչի կողմից» (ուզում են ասել՝ անուշադիր)։ Սուտ է. երբ ձեր հոգաբարձական առաջին տարիներում աղօթք ասելը վերացված է եղել դպրոցից, մենք ենք այդ կարգը վերականգնել բոլոր դասարաններում. բոլոր դասարաններում աղօթք կարդացվել է. այդ նկատմամբ ինձ ոչ ոք չէ բողոքել։ Միայն ձեզ վկայութիւն տուող Թախտաճեանը մի անգամ ինձ գանգատվել է, որ Դ. դասարանից երկու հոգի չեն ցանկանում աղօթք ասել։ Գանգատից յետոյ այդ դասարանում ունեցած առաջին իսկ դասիս ես դիտմամբ աղօթք ասել եմ տուել հէնց այդ աշակերտներից մէկին, հետևեալ անգամն էլ միւսին և նրանք առանց այլևայլութեան ասել են. ապա նրանց կանչել և աղօթք ասելուց խոյս տալու պատճառն իմացել։ Ի յարգանս Թախտաճեանի՝ այստեղ նրանց բերած պատճառաբանութիւնը չեմ դնում.

---

*) 1905—6 ուս. տարում, երբ Ներսէս վ. Շուշու Թեմ. դպրոցի տեսուչ էր, ես պաշտօնավարում էի այն դպրոցում իբրև ուսուցիչ եւ հոգաբարձութեան գործավար։ Դպրոցում տարվայ մէջ մանկավ. խումբը բաժանվեց երկու մասի։ Ես գտնվում էի Ներսէս վ.-ի հակառակորդների մէջ, որից եւ առաջացաւ այդ վրէժը։ Ռ. Տ.-Գ.

*) Տես «Մշակ» № 183.

տեսել միայն, որ այլ ևս նրանց մասին այդպիսի զանգատ չը լսեցի։

Աւետիք Տէր-Պօղոսեան

Էջմիածին, 8 օգոստոսի

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ

Մի շաբաթ սրանից առաջ կարդացի «Մշակի» № 160-ի արտաքին տեսութեան բաժնում Թաւրիզից Հայկազունի գրած նամակը։ Թղթակիցը, հիմնվելով Ատրպատականի Թեմակալ Կարապետ եպիսկոպոսի արած զեկուցումներին, ի միջի այլոց նկարագրում է Պարսկաստանի Սալմաստ գաւառի կրթական գործի նիւթական և բարոյական աստիճանը, որով և յիշեցնում է մեզ մեր բարոյական պարտականութիւնը։

Որպէսզի ընթերցող հասարակութեանը աւելի պարզ լինի և թիւրիմացութիւնների տեղի չը տրվի, մենք առաջ կը բերենք Հայկազունու տուած տեղեկութիւններից մէկը։

«Անհերքելի կարելի է խոստովանել, որ ծանօթ երիտասարդների խմբակները, որոնք միևնոյն ժամանակ Սալմաստի տէրերն են համարվում, ջանքեր չեն խնայել գաւառի զանազան գիւղերում ուսումնարաններ բաց անել տալու գիւղացու հաշւով, երբեմն ոյժ գործ դնելով նոյն իսկ գիւղացիների վրա»։

Մօտիկից ծանօթ լինելով Սալմաստի կենցաղավարութեանը, մանաւանդ կրթական գործին, որի հետ այնքան շփվել եմ, հրապարակով խոստովանում եմ այն դառն իրողութիւնը, որին դժբաղդաբար ականատես եմ եղել տարիներից ի վեր որպէս Սալմաստի բնակիչ։

Այո, շատ ճիշդ է նկատել Հայկազունը. իսկապէս որ «երիտասարդութիւնը Սալմաստի տէրն է համարվում» և «երբեմն ոյժ գործ դնելով գիւղացու վրա», բայց... ոչ երբէք կրթական գործերում։ Սալմաստի շրջանի ամենամեծ կենտրոն և առաջնակարգ գիւղերից Հաֆթուանը դեռ 80-ական թւականներից ունեցել է աւելի քան այժմ կանոնաւոր ուսումնարան, գր.-ընթերցարան և թատրօնական բեմ իրանց կարգ ու սարքով, ձեռնհաս վարիչներով և յաճախորդներով։ Այդ կուլտուրական հաստատութիւններին գլուխ էր կանգնած 1885 թ. մարտի 16-ին հիմնված «Սալմաստի գրասիրաց ընկերութիւնը», որը մի կերպ՝ մերթ քայքայվելով և մերթ վերանորոգվելով (1893-ին) քաշքշեց իր գոյութիւնը մինչև 1905 թ., երբ այդ ընկերութեան այլևս տասնեակներով հեռացող անդամներից մնացած 2—3 հոգին՝ առանց այն էլ թոյլ ու երերուն այդ ընկերութեան գոյքի և դրամի մնացորդը ստիպված եղան, ըստ կանոնագրի, նուիրել տեղի «Փօլօշեան» գրադարանին։

Գալով ուսումնարանների և գրադարանների այժմեան դրութեանը, վստահօրէն կասենք, որ այդ հաստատութիւնները փոխանակ առաջադիմելու՝ դեռ մի քայլ էլ յետ ու յետ են գնացել՝ շնորհիւ տեղացի «զարգացած» երիտասարդութեան։

Ցանկալի էր հայրենի երկիրը, ինչ գնով էլ լինի, կրթութեան գործի տեսակէտից հասած տեսնել իր բարձր աստիճանին, որին կարօտ ենք մենք և առաւելապէս մեր մատաղ սերունդը։

Կ. Սարգսեանց

Սամարա, 13 օգոստ.

ԹԻՒՐՔԻԱՆ, ՍԻՕՆԻՍՏՆԵՐԸ ԵՒ ՇՏՐԱՈՒՍԸ

Այս օրերս լրագիրներում տեղեկութիւն երևաց, թէ Թիւրքիայում պաշտօնավարող Հիւսիսային Ամերիկայի դեսպան Իօհան Շտրաուսին թոյլատրված է Պետերբուրգ գալ։

«Р. У.»-ի թղթակիցը խօսակցութիւն է ունեցել ներքին գործերի մինիստրին մօտիկ անձնաւորութիւններից մինի հետ Շտրաուսի գալստեան առիթով։ Ինչպէս յայտնի է, Շտրաուսը յայտնի երաժշտագէտի մօտիկ ազգականն է, հանդիսանում է հրէական սիօնիզմի տոկուն ղեկավարներից մինը։ Սիօնիստ-տէրրիտօրիալիստները շարունակ դիմումներ էին ստանում Թիւրքաց կառավարութիւնից Եգիպտոսում մի ընդարձակ հողաբաժին ձեռք բերելու մէջ, ուր սիօնիստները մտադիր են գաղթել աշխարհի ամեն կողմից և կազմել առանձին պետութիւն։ Սակայն զանազան անձանց ջանքերը ապարդիւն անցան. Թիւրքաց կառավարութիւնը յամառութեամբ չէր համաձայնում կատարել սիօնիստների խնդիրը, չը նայած որ վերջին անգամ միացեալ կօմիտէն, բաղկացած Ռօտշիլդից, Մենդէլսօնից և ուրիշ միլիօնատէրերից, առաջարկում էր Թիւրքիային 120 միլիօն րուբլի (ռուսական դրամով)։ Ներկայումս Իօհան Շտրաուսը եկել է վերջնական դրական հետևանքի։ Թիւրքաց կառավարութիւնը համաձայնել է որոշ գումարով զիջել գաղթական սիօնիստների համար հողաբաժին Եգիպտոսում։ Շտրաուսի գալուստը սպասվում է այս ամսի վերջերին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատն անհետևանք թողեց գրող Տանի (Բոգօրազ) վճռաբեկ բողոքագիրը, որին Մոսկվայի դատաստանական պալատը 126 դ յօդուածով դատապարտել է մի տարով բանտարկութեան։

Բարձրագոյնս հաստատվեցին այն կանոնները, որոնց համաձայն Նիկօլայէվի ինժեներական ճեմարանի լրացուցիչ դասընթացքներն աւարտող բոլոր օֆիցէրները ստանում են ինժեների կոչում իբրև գիտական աստիճան։

ՕԴԵՍԱ։ Զինուորական օդագնացութեան դպրոցում շտաբս-կապիտան Գրէկովը աջող թռիչք կատարեց Բլէրիօյի օդապարիկով։

ՌԻԳԱ։ Անցաւ Ստօլիպինը։

ԴՕՎԻԼ։ Օդագնաց Մօրանը սահմանեց համաշխարհային մրցանակակէտ (րէկօրդ), բարձրանալով 2582 մետր։

ՎԱՐՇԱՎԱ։ Համալսարանում ընդունվեցին 420 քրիստոնեայ և 42 հրէայ։ 309 սեմինարիաւարտներ տալու են լրացուցիչ քննութիւն։

22 օգոստոսի

ԿՈՒՐԳԱՆ։ Մինիստրների խորհրդի նախագահը և երկրագործութեան գլխաւոր կառավարիչը ծանօթացան գաղթականական գործի հետ և այցելեցին խոլերային բարաքները։

ՌԱԴՈՄ։ Եկան չորս մօսկօվցիներ, որոնք աշխարհի շուրջ պտտելու են առանց փողի։

ՔԻՇԻՆԷՎ։ Կուզնէցովը աջող թռիչքներ կատարեց Բլէրիօյի աէրօպլանով։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ։ Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդօրօվնայի 10,000 րուբլու մրցանակը $1^1/_2$ վերստ տարածութիւն անցնելու համար վերցրեց Իկօնիկօվի «Օզէնը» 1 րոպէ 35 վայրկեանում։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Ռումինիայի և Թիւրքիայի միջև սկսվեցին բանակցութիւններ առևտրական պայմանագրի համար։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Սբաս-Աբաստսկայա, տուն Միրիմանօվի։
(ե. հ. կ.) 725. 100—30

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 38
(ե.հ.կ.) 909. 100—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՄ **Արօնի դասագրքեր** ցանկացողները կարող են դիմել բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовская ул. 20)։ Գները՝ ինչպէս յայտարարված է գրքերի կազմի վրա։
ՍԱՀԱԿ ա.-քահ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(ե. ու.) 903. 10—5

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Օրէ-ցօր շատացող պահանջը ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻ վերաբերմամբ առիթ է տուել վերջին ժամանակներս երևան գալու բազմաթիւ փոքրարժէք կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով (սպերմատին, սպերմինօլ, սպերմօլ, սեկարօվեան հիւթ, հեղուկ և այլն) և միևնոյն ժամանակ կեղծողների կողմից առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻՆ համահաւասար և նոյնիսկ նրանից բարձր ազդեցութիւն ունեցող դեղ։ Կեղծողները յաճախ լինում են այնպիսի մարդիկ, որոնք բժշկականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեն, օրինակի համար՝ դեղավաճառ և պարֆիւմէրի խանութներ ունեցողները և այլն։ Հասկանալի է, որ այդօրինակ կեղծիքները բժշկականութեան և գիտութեան հետ առհասարակ ոչ մի կապ չունեն, սակայն, որպէսզի գիտական բնաւորութիւն տրված լինի նրանց, կեղծողները իրանց րէկլամների մէջ բերում են գրականութիւն և բժիշկների դիտողութիւններ ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ մասին՝ մոլորութեան մէջ գցելով ոչ միայն հիւանդներին, այլ և պ. պ. բժիշկներին։

Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ յիշեալ կեղծիքներից այն անձերին, որոնք օգտվում են ՍՊԵՐՄԻՆԻՑ։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ դիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ բուժիչ ազդեցութեան մասին, այն է՝ նեվրաստենիայի, սեռական թուլութեան, ծերութեան, իստերիայի, նեվրալգիայի, արեան պակասութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (չաղութիւն, սրտի կծկումներ, սրտի բաբախում, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացման, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից թուլացած լինելու, յղացածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ — վերաբերում են ԲԱՑԱՌԱՊԷՍ ՍՊԵՐՄԻՆ ՊԵԼԻՆ, հետևաբար և խնդրում ենք գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻ“ անուան և ֆիրմայի վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻՆ նմանեցրած կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ քանի որ միակ իսկական սպերմին ներկայացնում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻՆ։ Սրուակը 3 ռուբ.։ Գրականութիւնը՝ ուղարկվում է ըստ առաջին պահանջման ձրի։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ՊՐՈՖԵՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԵԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի — Ս.-Պետերբուրգում։
(П. 77035.) 455. 8—8

„Գուտտենբերգ“ գրախանութում վաճառվում է
Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատութիւնը՝
Մի էջ հայկական ուսուցման պատմութիւնից, գինն է 60 կ.
Այնտեղ են վաճառվում նոյն հեղինակի և միւս աշխատութիւնները՝
Նոր Այբբենարան ուսուցիչ. համար 75 կ.
Նոյնը աշակերտների համար 15 կ.
Իրազննական դասեր 1 ր.
Начальн. русск. Хрестоматія для армянъ 1-я книжка 55 կ.
Նոյնը 2-книжка 75 կ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“.
(ե. ու.) 981. 8—1

Թամաղեանց Մ-ի
կազմած կրօնի գրքերը
1. Կրօնի դասատուութիւնը Ա. բաժանմունքում, ուսուցիչների ձեռնարկ, գ. 40 կ.
2. Կրօն, Ա. տարի, բարոյախօսական առակներ և Յիսուսի կեանքից պատմուածքներ, 15 կ.
3. Կրօն, Բ. տարի, Նահապետների կեանքից պատմուածքներ, 20 կ.
4. Կրօն, Գ. տարի, Մովսէսից մինչև Թագաւորութեան բաժանումը, 35 կ.
Գումարով գնողներին $20^0/_0$ զեղչ
Դիմել՝ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներին և կազմողին՝ Թիֆլիս, Միքայէլեան փող. № 82. Շուտով լոյս կը տեսնի՝ Կրօն, Դ. տարի, Մարգարէներ։
(ե. հ. կ.) 983. 5—1

Հաւլաբարի Ս. ԿԱՐԱՊԵՏԻ դպրոցն այս տարվայ սեպտեմբերից ունենալու է
ԱՌԱՋԻՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ
բաժանմունքներ։
Ընդունելութ. սկսվում է օգոստ. 23-ից—28 ը։ Վերաքննութիւնը՝ օգոստոսի 30 ին և 31-ին։ Ուսումը՝ սեպտեմբերի 1 ից։
Հոգաբարձութիւն
(օ. մ.) 984. 3-1

Լոյս տեսաւ
ՁԵՌՆԱՐԿ
ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆ
(Ուղղագրական եւ քերական վարժութիւններ)
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԷԿ
Դիմել՝ Александрополь, учителю М. Тарахчіанъ, կամ՝ Թիֆլիսի գրավաճառներին։
(օ.մ.) 979. 10—1

ՔԱՄՈՅԵԱՆ Ս. ԳԷՈՐԳ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԸ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
Բրօսսէ տուպիկ № 8 (2-րդ քաղաքմաս)։ Երեխաների ընդունելութիւնը սկսվելու է օգոստոսի 30-ին, երկուշաբթի օրվանից։
Հոգաբ. նախագահ՝ Ց. Մելիք-Բախտամեան
Տեսուչ՝ Գ. Վարդանեան
(կ.ե.հ.շ) 971. 4—2

Լոյս են տեսել և վաճառվում են
Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ
Դասագրքերը։
1) Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու Ա. և Բ. տարիների դասընթաց։ 1910 թ. 30 կոպ.
2) Հարստան. Ռուզամի՝ Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու։ Գ. տարվայ դասընթաց։ Բ. տպ. 1910 թ. 30 կոպ.
3) Նոյն գրքի՝ Դ. տարվայ դասընթաց։ 1909 թ. 35 կոպ.
Պահեստը «Գիր» գրավաճառանոցում (Тифлисъ, Вельяминовская ул. № 7).
(ե. ու.) 916. 6—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Արշակ Չիլինկարեանի եւ Տիգրան Ռաշմանեանի
ԴԱՍԸՆԿԵՐ Բ. ՏԱՐԻ
Մէջ ընդ մէջ կան ձեռագիր յօդուածներ աշտապրութեան եւ ուղղագրական որոշ կանոնների համար։
ԿԱԶՄԱԾ 60 ԿՈՊԷԿ
ԴԱՍԸՆԿԵՐ Ա. տարի (այբբենարան-ընթերցարան)
ԿԱԶՄԱԾ 50 ԿՈՊԷԿ
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, Թիֆլիս. գումարով առնողներին զեղչ $20^0/_0$, գրավաճառներին զեղչ $25^0/_0$։
(ե. շ.) 938. 8—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES»
Օգոստոսի 25-ին (ըստ ն. տ. սեպտեմբ. 7-ին) մեկնելու է Բաթումից առաջնակարգ «Bosphor» շոգենաւը հանգիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալին, Նախկին Արծրունու գալերէյայում թիւ 127 գրասենեակը, հեռախօս թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամէն օր, բացի կիրակի օրերից։
987. 1—1

Լոյս են տեսել և վաճառվում են
ԼԵՒՈՆ ՔԱՐԱՅԵԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
(Կազմված ըստ գերմանական և ռուսական դասագրքերի)
ՄԱՍՆ Ա. Բնական աշխարհագրութիւն. Կովկաս և սահմանակից երկիրներ (Թիւրքահայաստան և Պարսկահայաստան), 4-րդ և մասամբ 3-րդ տարվայ դասընթաց, (Հայրենագիտութիւն և ընդհ. աշխարհագրութիւն)։ Բազմաթիւ մեծադիր պատկերներ, գինն է 60 կոպ.
ՄԱՍՆ Բ. Քաղաքական աշխարհագրութիւն, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա և Աւստրալիա 5-րդ տարվայ դասընթաց, գինն է. 65 կոպ.
ՄԱՍՆ Գ. Քաղաքական աշխարհագրութիւն, Եւրօպա, 6 րդ տարվ. դասընթաց, գ. 50 կոպ.
Հրատարակութիւն «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցի, Թիֆլիսում։
(ե.հ.կ.) 982. 8—1

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ՁԻԹԱԽՕՎԻ կտաւի գործարանից մնացորդ ջուլհակային տոբեր և մանելու մեքենաները. նոյնպէս և՝ մեքենաների մասեր, չղթաներ, անիւներ, վալեր և թել մանելու այլ և այլ գործիքներ, երկաթի և չուգունի կտորտանքներ։
5-րդ քաղաքամաս, Վօրօնցօվսկայա փողոց, № 58.
Գրաւոր դիմել՝ Ջուղուրեթ, Եկատերինինսկայա փող. № 4, Թումանեանցին։
(ե.հ.կ.) 978. 4—1

ՀԻՊՆՕՏԻԶՄ



ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
◆◆◆◆◆◆◆
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ ազդեցիկ ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրօններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրօֆէսիօնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօզացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն Հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգետեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պէտք է ուղարկել 10 կոպէկի նամակադրոշմ ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A. (ե.շ.) 689. 100—23

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
Երկու սեռերի անձերի համար
(Տասնեւմեկերորդ տարի)
Դասընթացքներում աւանդվում են՝ կրկնակի իտալական հաշւապահութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, առևտրական թւաբանութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական իրաւունք, գեղագրութիւն և ցանկացողներին՝ ըէմինգտոնով գրելու ուսուցումն։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1910 թ.։
Դասընթացքները շարունակվում են 6 ամսից ոչ պակաս։ Պարապմունքներն երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Ամբողջ դասընթացքի վճարն է 40 րուբլի։ Խնդիրները՝ Թիֆլիսի Առևտրական Դպրոցի Վերատեսուչի անունով ընդունվում են Առևտրական Դպրոցի գրասենեակում, առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը ցեր.։
(ու. կ. ե.) 960. 6—3

Լոյս են տեսել և վաճառվում են
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
Կենսաբանական ուղղութեամբ կազմված
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ (տարրական մարդակազմ. և կենդանաբանութիւն) 204 երես, 70 կոպ.
ԲՈՅՍ (տարրական բուսաբանութիւն) 128 երես 50 կոպ.
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ», «Կենտրոնական», «Գիր» և «Փարոս» գրավաճառանոցները կամ կազմողին հետևեալ հասցէով՝ Кочубеевскій переулокъ, 13.
Վաճառվում են նաև
Վ. լհէլմ Բէօլշէ.—«ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ», գերմ. թարգմ. Նիկ. Սարգսեան, գինը 40 կոպ.
Նիկ. Սարգսեան.—«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՅՆԵՐԸ» գինը 15 կոպ.
(օ.մ.) 889. 10—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏ. ՈՒԹԵԱՆ ԻՐԱԻԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձեռվ հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում։
Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվում են սեպտեմբեր ամսից ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1910 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացքն աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, Телефонъ № 744.
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքցիները գիրքը կանխ. համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կ.։
(կ.ե.հ.) 930. 0—5